

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ Քսան Կախաղաններու Տարելիցին Առթիւ

Յունիս 15, 1915-ին Պոլսոյ Պալատի հրապարակին վրայ կախաղան բարձրացան Հնչակեան Բանակի անդամները, որոնք կանխատեսելով հայ ժողովուրդին սպառնացող վտանգը կը ծրագրէին տերութի ենթարկել Երիտթուրքերու պարագլուխները ու այդպիսով առաջը առնելու եղբունագործութեան: Փարամազի գլխաւորած այդ հոյլ մը գործիչները չյաջողեցան իրենց ծրագիրը լրումին հասցնել, ենթարկուեցան ընդհանուր հայութեան նկատագրին ու միացան մէկ ու կէս միլիոն նահատակներու շարքին:

Այդ թուականէն ասդին Հնչակեան Կուսակցութիւնը ամենուրեք կը նշէ Քսաններու հերոսացման տարելիցը, ոչ միայն խնամարկելու համար անոնց անմոռ յիշատակին առջեւ, այլ նաեւ նոր սերունդները իրագրելու դարձնելու անոնց անձնագործութեան ոգին ու դաստիարակելու՝ որ անհրաժեշտութեան պարագային պատրաստ պէտք է ըլլալ պայքարելու՝ յանուն ազգի ու հայրենիքի:

Հայ ժողովուրդի պատմութեան էջերը հարուստ են հերոսներով, որոնց կեանքն ու գործունէութիւնը ներշնչման աղբիւր են մեզի համար: Քսանները կը դասուին այդ հերոսներու շարքին, քանի որ անոնք եւս, գիտակցաբար ընտրեցին այն փշոտ նահապարհը, որ պիտի առաջնորդէր դէպի մահ:

Քսաններու նահատակութեան 100-ամեակները ետք, իր ծննդավայր Մեղրիի մէջ կանգնեցաւ Փարամազի յուշարձանը: 98 տարիներ ետք Քսանները դարձեալ «վերադարձան» Պոլսոյ Պալատի հրապարակը, ուր թուրք յանապառօն մտաւորականներ համարձեռնեցան ոգեկոչելու ու թուրքահասարակութիւնը լուսարանելու Քսաններու գաղափարախօսութեան մասին: Վերջին տարիներուն Քսաններու մասին թուրքիոյ մէջ լոյս տեսան հրատարակութիւններ ու նկարահանուեցաւ ֆիլմ: Իսկ, այս օրերուն, Հայկական ցեղասպանութիւնը պաշտօնապէս նանչեցած առաջին երկիրը հանդիսացող Ուրուկուէյի մայրաքաղաք Մոնթեւիդէոյի մէջ բացուեց կատարուի Փարամազի անուան հրապարակին՝ առ ի երախտագիտութիւն հայ ժողովուրդին:

Այսպիսով, Քսանները կը հանդիսանան ոչ միայն Հնչակեան Կուսակցութեան հերոսները, այլ նաեւ մերոյ հայութեան, թուրքիոյ ժողովրդավարական զանգուստներուն ու միջազգային հայասեր շրջանակներուն:

Յարգանք Քսաններու յիշատակին:

«ՄԱՍԻՍ»

## Թուրք-Գերմանական Յարաբերութիւնները Կը Շարունակեն Վատթարանալ

Հայոց ցեղասպանութիւնը հաստատող բանաձեւի ընդունումէն ետք, թուրք-գերմանական յարաբերութիւնները կը շարունակեն սրիլ: Գերմանիոյ խորհրդարանի՝ Պունտսթակի նախագահ Նորբերտ Լամմերտ հրատարակաւ քննադատեց թուրքիոյ նախագահ Ռեջեփ Էրտողանին, որ սպառնական յայտարարութիւններ կը կատարէ գերմանական խորհրդարանի ծագումով թուրք պատգամաւորներու հասցէին: «Ուեէ մէկը, որ կը փորձէ սպառնալիքներով ճնշում գործադրել անհատ խորհրդարանականներու վրայ, պէտք է իմանայ, որ յարձակում կը գործէ ամբողջ Պունդեսթակի վրայ», - ըսած է Լամմերտ:

Գերմանիոյ խորհրդարանի նախագահը պնդած է, որ Պունտսթակը պարտաւոր է հակադարձել թրքական կողմին՝ օրէնքով հնարաւոր բոլոր միջոցներով:

«Ես ապշած եմ, որ գերմանացի օրէնսդիրներու հասցէին սպառնալիքներ կը հնչեցնեն նաեւ թուրք բարձրաստիճան պաշտօնեաները: Երբեք չէի մտածեր, որ ժողովրդավար ճանապարհով ընտրուած ռեւէ

նախագահ, 21-րդ դարուն իր քննադատութեան հիմքը կը դարձնէ Պունտսթակի պատգամաւորներու ծագումը՝ փչացած համարելով անոնց արիւնը:

Լամմերտի այս խօսքերը ողջունելով ընդունուած է խորհրդարանի դահլիճին կողմէ, ուր ներկայ էր նաեւ Գերմանիոյ վարչապետ Անկէլա Մերկել:

Պունտսթակի նախագահէն բացի Էրտողանի յայտարարութիւնները խստօրէն քննադատած է նաեւ Եւրախորհրդարանի նախագահ Մարտին Շուլցը: Ան դատապարտած է թուրքիոյ նախագահ Ռեջեփ Էրտողանի այն յայտարարութիւնները, որոնք կ'առնչուէին Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի ընդունման:

Էրտողան յայտարարած էր, որ անհրաժեշտ է «արեան քննութիւն» կատարել գերմանացի այն պատգամաւորներուն, որոնք ունին թրքական արմատներ՝ պարզելու համար որ, անոնք իսկապէս թուրք են:

Էրտողան յայտարարած է, թէ թրքական կողմը այժմ կը գնահատէ իրավիճակը, որմէ ետք համապատասխան քայլեր պիտի առնուին:

## Հնչակեան Կուսակցութեան Շնորհաւորական Այցելութիւնը Առաջնորդ Յովնան Սրբազանին



Յովնան Արք. Տէրտէրեան շրջապատուած պատուիրակութեան անդամներով՝ Առաջնորդարանի շրջափակին մէջ

Հինգշաբթի, Յունիս 9-ին Սոց. Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը շնորհաւորական այցելութիւն տուաւ Արեւմտեան Թեմի Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ առաջնորդ Գերբ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանին, երրորդ եօթնամեակի համար առաջնորդ վերընտրուելուն առիթով:

Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի պատուիրակութեան Կուսակցական մասնաճիւղերու, ինչպէս նաեւ Նոր Սե-

րունդ Մշակութային Միութեան, «Կայծ» Երիտասարդաց Միութեան, Հայ Ամերիկեան Խորհուրդի, «Մասիս» շաբաթաթերթի եւ Հ.Մ.Մ.ի Տիկնանց Օժանդակ Մարմնի պատասխանատուները:

Շուրջ 25 հոգիներէն բաղկացած պատուիրակութեան անդամները ջերմօրէն ընդունուեցան առաջնորդ Յովնան Սրբազանի, թեմական Խորհուրդի ատենապետ իրաւաբան՝ Ժօզէֆ Կանիմեանի եւ Արեւմտեան Թեմէն ներս ծառայե-

Շաբ.ը էջ 5

## Շնորհակալական Այցելութիւն Գերմանիոյ Զիւպատոսարան

Հարաւային Գալիֆորնիոյ հայ գաղութը ներկայացնող պատուիրակութիւն մը, անցեալ Ուրբաթ, Յունիսի 10-ին, այցելութիւն մը տուաւ Լոս Անճելոսի Գերմանիոյ Դաշնակցային Հանրապետութեան հիւպատոսարան, շնորհակալութիւն յայտնելու Գերմանիոյ Խորհրդարանին կողմէ հայոց ցեղասպանութեան ճանաչումին առթիւ:

Համագաղութային պատուիրակութեան մաս կը կազմէին հետեւեալները՝ Հոգ. Բագրատ Վրդ. Պերճէքեան (Հայց. Առաքելական Եկեղեցի), Վեր. Պերճ Ճամպագեան (Հայ Աւետարանական Եկեղեցի), Միւռոն Մ. Վրդ. Ագնիկեան (Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն), Գաբրիէլ Մոլոյեան (Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն), Տօթ. Ռաֆֆի Պալեան (Ռաւմակար Կուսակցութիւն) Տարօն Տէր Խաչատուրեան (Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն) Թայլին Եագուպեան (Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն) Եւ Մարօ Փափագեան (Հայ Օգնութեան Միութիւն): Գերմանիոյ հիւպատոսի բացակայութեան պատուիրակութիւնն ընդունուեցաւ հիւպատոսի պաշտօնակատար Սթեֆան Պէյտերմանի կողմէ, կողքին ունենալով Քայ Ուվէ Սթայլըրն ու Փիթէր Շմիտթը:

Պատուիրակութեան անդամները խօսք առնելով գնահատեցին

Շաբ.ը էջ 5

## Թուրքիոյ Նախագահին Թոյլ Չեն Տուած Ելոյթ Ունենալ Մուհամմէտ Ալիի Յուղարկաւորութեան

Ուրբաթ, Յունիս 10-ին Լուիվըլի մէջ տեղի ունեցաւ աշխարհահռչակ բռնցքամարտիկ Մուհամմէտ Ալիի յուղարկաւորութիւնը, որուն մասնակցելու համար Միացեալ Նահանգներ ժամանած էր թուրքիոյ նախագահ Ռեջեփ Էրտողան, որ մերժումի արժանանալով կազմակերպիչներուն կողմէ, վերադարձաւ իր երկիրը, առանց մասնակցելու արարողութեան:

Արդարեւ, Էրտողանի նախատեսուած ելոյթը ջնջուած է, ժամանակի չգոյութեան պատճառաւ: Մերժումէն նաեւ Ալիի դազաղին վրայ Գապայէն (Իսլամական սրբավայրէն) բերուած կերպասի կտորը դնելու էրտողանի փափաքը: Նոյնպէս թոյլ չէ տրուած որ, թուրքիոյ կրօնապետը Քորանէն ընթերցուի կատարէ:

Այս բոլորէն զայրացած, Էրտողան առանց մասնակցելու յուղարկաւորութեան, վերադարձած է թուրքիա:

Շաբ.ը էջ 5



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Կեղծ իշխանափոխութեան Օրակարգը

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Հայաստանում նախընտրական պայքարը մեկնարկել է, եւ քաղաքական ուժերը հերթով յայտարարում են, որ իրենք են միակ ընդդիմադիր ուժը, եւ իրենց միակ նպատակն իշխանափոխութիւնն է: Սա նորմալ երեւոյթ է, այդպէս էլ պիտի լինի: Գովազդային տեսահոլովակներում էլ է այդպէս օրինակ՝ համեմատութեան մէջ են դնում երկու տուփ լուսացքի փոշի, որոնցից մէկի վրա մեծ-մեծ տառերով գրուած է գովազդող փոշու անուանումը, իսկ միւս տուփի վրայ գրուած է «սովորական փոշի»: Նպատակը հասկանալի է. շարքային սպառողին ցոյց տալ, որ գովազդող ապրանքը միակն է, բացառիկ է (սովորական չէ) եւ իհարկէ՝ ամենալաւն է (յաղթում է):

Բայց եթէ կենցաղային գովազդի դէպքում այս տրամաբանութիւնն ընդունելի է, ներքաղաքական պայքարում յաճախ ամէն ինչ գաւեշտի է վերածուած: Այն պարզ պատճառով, որ ճշգրտորէն գոյնների յետեւից ընկնելով՝ քաղաքական ուժերը երբեմն մո-

ռանում են դրանց մէջ իմաստ դնել: Միայն մի օրինակ բերենք: Կարելի է այսպիսի «գիտափորձ» անել՝ դուրս գալ փողոց եւ, ասենք, հազար հոգու հարցնել. «2008 թ. նախագահական ընտրութիւնների ժամանակ իշխանափոխութիւն եղե՞լ է, թէ ոչ»: Բնականաբար՝ հարցուածները ջախջախիչ մեծամասնութիւնը կը պատասխանի, որ իշխանափոխութիւն չի եղել, որովհետեւ թէեւ ժողովուրդն ընտրել էր Լեւոն Տէր-Պետրոսեանին, բայց իշխանութիւններն արդիւնքները կեղծեցին, համաժողովրդական շարժումը խեղդեցին արեան մէջ, տասը գոհ ունեցանք, եւ արդիւնքում՝ իշխանափոխութիւն տեղի չունեցաւ: Եւ դա, ի դէպ, կը լինի ճիշդ պատասխան: Ու անմիջապէս էլ կարելի է երկրորդ հարցը տալ. «Ի՞նչ էք կարծում, եթէ Ռոբերտ Քոչարեանին Սերժ Սարգսեանով փոխարինեն իշխանափոխութիւն չէր, կարելի է Սերժ Սարգսեանին Ռոբերտ Քոչարեանով փոխարինելը համարել իշխանափոխութիւն»: Պատասխանը պարզ է, որովհետեւ եթէ 2008-ին իշխանութեան փոխանցման ակտն իշխանափոխութիւն չէր, ուրեմն հա-

կառակ գործընթացը նոյնպէս իշխանափոխութիւն չէ:

Մինչդեռ այսօրուայ ներքաղաքական կեանքի հիմնական ինտրիզը հենց դա է՝ տեսնես Քոչարեանի ստեղծած (կամ նրա թաքուն աջակցութիւնը վայելող) քաղաքական ուժը կը կարողանա՞յ յաղթել առաջիկայ ընտրութիւններում: Ենթադրենք՝ կարողացաւ, Քոչարեանը դարձաւ երկրի ղեկավար, ՀՀԿ-ն «իրենով արեց», վարդան Օսկանեանին նշանակեց արտգործնախարար եւ այլն, յետո՞յ: Դա իշխանափոխութիւնն է: Որեւէ մէկը կարող է բացատրել, թէ որն է, ասենք, Ռոբերտ Քոչարեանի ու Սերժ Սարգսեանի տարբերութիւնը (բացի նրանից, որ մէկը բասկետբոլ է խաղում, միւսը՝ շախմատ կամ պոկեր): Երկուսն էլ Հայաստանում ունեցած բացարձակ իշխանութիւնը ծառայեցրել են իրենց անձնական շահերին, երկուսն էլ ահռելի ունեցուածք են կուտակել, երկուսն էլ համարեայ հաւասար «փայլաբաժիններով» ձեւաւորել են այսօր գոյութիւն ունեցող կլանային համակարգն ու իրենց իշխանութիւնը պահպանելու համար

Սերժ Սարգսեանն Ունի Նոր Խնդիրներ, Թե՛ Նոր Յաւակնութիւն

ԵՂԻԱԶԱՐ ԱՅՆԹԱՊՑԻ

Կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարար Դաւիթ Յարութիւնեանը չի բացառում, որ Ընտրական օրէնագիրքը կարող է խորհրդարանում կրկին քննարկուել: Յամենայնդէպս, լրագրողների հետ զրոյցում նա ասել է, որ նման բան հնարաւոր է: Ըստ որում, յիշեցնենք, որ խօսքը մէկ անգամ արդէն ամբողջութեամբ ընդունուած օրէնագրքի մասին է, ինչը տեղի է ունեցել մի քանի շաբաթ առաջ:

Եւ ուրեմն առնուակն տարօրինակ է, երբ մի քանի շաբաթ առաջ պահանջուածից աւելի ձայներով անցած ԸՕ-ի վերաբերեալ իշխանութեան ներկայացուցիչը կրկին հնարաւոր է համարում նոր քննարկումը: Եթէ իշխանութեան ներկայացուցիչը նման յայտարարութիւն է անում, նշանակում է, որ կան խնդիրներ: Եւ ամենայն հաւանականութեամբ, խնդիրները Հայաստանում չեն, այլպէս իշխանութիւնները ԸՕ-ն չէին անցկացնի:

Հայաստանում իշխանութիւնն ընդհանրապէս այդ առումով ակն-

յայտօրէն խնդիր չունի, առաւել եւս՝ Ղարաբաղեան խնդրի շուրջ այն կոնսոլիդացիոն մթնոլորտի գեներացիայի շնորհիւ, որ կատարուեց ապրիլեան պատերազմից յետոյ: Գործնականում բոլոր քաղաքական ուժերը հաճուցքով տրուեցին իշխանութեան այդ գաղափարին, եւ աւելին՝ հենց այդ միջոցով է, որ սահուն կերպով անցկացուեց Ընտրական օրէնագիրքը: Եւ եթէ այսօր իշխանութիւնը, կառավարութեան աշխատակազմի ղեկավար-նախարարը, որն ըստ էութեան իշխանութեան ուղեղային կենտրոններից է, խօսում է նոր քննարկման հնարաւորութեան մասին, ուրեմն խնդիրներ կան դրսում:

Դաւիթ Յարութիւնեանի այդ յայտարարութիւնները յուշում են, որ չնայած ԸՕ-ի ընդունմանը՝ ՀՀԿ-ն, այնուհանդերձ, չի կարողանում միջազգային հանրութեան համար լինել քիչ թէ շատ համոզիչ՝ առնուազն այն «յանձնառութիւններում», որոնց մասին Փետրուարի 12-ի իր ելոյթում յայտարարում էր Սերժ Սարգսեանը եւ յորդորում իշխող համակարգին, որ դրանք

պէտք է կատարուեն:

Կասկած չկայ, որ խնդիրն, իհարկէ, տեխնիկական չէ, այլ քաղաքական: Ակնյայտ է, որ կա՛մ միջազգային հանրութիւնն է ինչ-որ իրողութիւններից ելնելով բարձրացրել նշաձողերը եւ աւելին է պահանջում Հայաստանի իշխանութիւնից, կա՛մ Հայաստանի իշխանութիւնն է աւելացրել իր նպատակները կամ մտադրութիւնները՝ հաւանութիւն ակնկալելով միջազգային հանրութիւնից, որն էլ, բնականաբար, առաջնորդում է աւելին աւելի դիմաց սկզբունքով:

Տուեալ դէպքում, իհարկէ, իշխանութիւն հասկացութիւնը միատարր չէ, եւ խօսք կարող է լինել պարզապէս Սերժ Սարգսեանի ունեցած կա՛մ նոր խնդիրների, կա՛մ նոր հաւակնութիւնների մասին: Ներկայումս ակնյայտ է, որ Հայաստանի իշխանական համակարգից հենց նա է, որ ուղիղ հաղորդակցման մէջ է միջազգային հանրութեան հետ, իշխանական այլ բեւեռների կամ չյաջողուեց հաստատել այդպիսի հաղորդակցութիւն, կամ դեռեւս չի յաջողուել: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

հիմնուել հենց այդ համակարգի վրայ, երկուսն էլ որպէս Հայաստանի տնտեսութեան «շարժիչ ուժ» ընկալել են խոպանչիների ուղարկած գումարները, վարկերն ու Հայաստանի ունեցած-չունեցածը վաճառելը եւ այլն: Նոյնիսկ մանրուքներում են եղել նոյնը: Օրինակ՝ երկուսն էլ ընդդիմութեան դէմ պայքարում յենուել են «յաճախորդները» վրայ, կեղծ ընդդիմադիրներ են ստեղծել, «աշխատել են»: Դաշնակցութեան հետ, ԵԿՄ-ն ծառայեցրել են իրենց շահերին, եւ այսպէս շարունակ: Պարզապէս այսօրուայ երիտահմարակցականները Քոչարեանի օրօք «բազէներ» էին, այսօրուայ կարկառուն հանրապետականները՝ անկուսակցականներ (որովհետեւ Քոչարեանն ասում էր «իմ կուսակցութիւնը ժողովուրդն է»):

Ինչո՞ւ ենք ասում այս ամէնը: Որովհետեւ Հայաստանի վիճակն իսկապէս բոլոր առումներով շատ ծանր է, եւ իսկապէս ինչ-որ բան շտկելու համար իշխանափոխութիւն է պէտք: Սա միանշանակ է, եւ սրանում որեւէ մէկը չի կասկածում: Բայց եթէ դա անի Ռոբերտ Քոչարեանը՝ դա արդէն իշխանափոխութիւն չի լինի: Դա «կակուզ» կը լինի ամէն ինչ՝ բացի իշխանափոխութիւնից: Որովհետեւ պետութեան համար մեծ տարբերութիւն չկայ՝ որոշումները «Մելիք-Աղամեանում» կը կայացուեն, թէ՛ այլ հասցէում: Շատ շատ՝ ՀՀԿի տատիկը դառնայ Համախմբման տատիկ, եւ վերջ:

Մինչդեռ Հայաստանին իսկական իշխանափոխութիւն է պէտք: Համակարգը պիտի փոխուի, եւ ոչ թէ «ծիւնինդ արուի»՝ հերթական շէֆի ճաշակով: Նման «ծիւնիդներից» ոչ մի օգուտ չկայ, եւ հասարակութիւնը դրանում համոզուել է 2008թ. «Իշխանափոխութիւնից» յետոյ:

«ԶՈՐՐՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐՔ**

ՊԱՇՏՏՈՒԱԹԵՐՔ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՍԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
 ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$100.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$250.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

Երբ Գլխից Չեն Բռնում Սեծերին

ԱՐՄԻՆԷ ՕՋԱՆԵԱՆ

Երբ 2012-ի խորհրդակցութիւններից մէկի ժամանակ Սերժ Սարգսեանը յայտարարեց, թէ «գլխից է պէտք բռնել եւ՝ մեծերին», հանրութեան շրջանում յոյսեր արթնացան, որ կոռուստայից ուժած պաշտօնեաները վերջապէս կը պատժուեն, եւ դա դաս կը լինի միւսների համար: Անգամ ինչ-որ փորձեր ձեռնարկուեցին այդ ուղղութեամբ՝ կալանաւորուեցին եւ դատապարտուեցին Սոցիալական ապահովութեան պետական ծառայութեան պետը, ոստիկանութեան քրէական հետախուզութեան պետը, ձանապարհային ոստիկանութեան պետը: Եւ պրոցէսը կանգնեց: Նաեւ, ինչպէս պարզուեց, դա դաս չեղաւ միւսների համար:

Կոռուպցիայի մէջ թաղուած չինովնիկներին թուաց, թէ վերջիններս պատժուեցին, որովհետեւ աւելի միամիտ էին, չէին «կիսուել» վերեւների հետ, անհնազանդութիւն էին դրսեւորել եւ այլն: Իրենք շատ աւելի ճարպիկ են, ինչօք ու հնազանդ, եւ իրենց ոչ մի վտանգ չի սպառնում: Իսկ կոռուպցիան իր արմատներն էր ձգել անգամ այնպիսի համակարգերում, որտեղ իւրացումը ոչ միայն անբարոյական է, այլեւ պետութեան համար վտանգաւոր: Հենց 2012-ի մի խորհրդակցութեան ժամանակ ՀՀ նախագահի վերահսկողութեան ծառայութիւնը մանրակրկիտ զեկոյց էր ներկայացրել բանակի գնումների գործընթացի եւ այնտեղ տիրող խայտառակ կոռուպցիոն պատկերի նկարագրու-

թեամբ: Սերժ Սարգսեանն էլ անթույլատրելի էր համարել «գնումների գործընթացում պետութեան սուղ միջոցների եւ գինուորների հաշուին թոյլ տրուող չարաշահումները եւ խստօրէն քննադատել այդպիսի մտեցում ցուցաբերող անձանց»: Եթէ այն ժամանակ կոնկրետ քայլեր ձեռնարկուէին, եւ այդ խորհրդակցութիւնը չվերածուէր հերթական փիառակցիայի, իսկ ատուգումների արդիւնքներին ընթացք տրուէր, 2016-ի ապրիլեան դէպքերը գուցէ չլինէին: Եւ բանակի հաշուին տգործկի պէս սնուած ու տուգած պաշտօնեաները գուցէ վաղուց յայտնուած լինէին ճաղերի ետեւում:

«ՀՐԱՊԱՐԱԿ»



ԱՅՍԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Իշխանութիւնները Վեներտիկի Յանձնաժողովին Խնդրել են Նոր Կարծիք Տրամադրել ԸՕ-ի Վերաբերեալ

Արդարադատութեան նախարարութեան փոխանցմամբ՝ Հայաստանի իշխանութիւնները Վեներտիկի յանձնաժողովին խնդրել են նոր կարծիք տրամադրել Մայիսի 25-ին ընդունուած Ընտրական օրէնսգրքի վերաբերեալ, որտեղ յանձնաժողովը եւ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն կը գնահատեն նոր օրէնսգրքում ներառուած վերջին փոփոխութիւնները եւ իրենց առաջարկութիւնները համապատասխանութիւնը:

Ըստ հաղորդագրութեան, օրեր առաջ Վեներտիկի յանձնաժողովի նիստին մասնակցող նախարար Արփիինէ Յովհաննիսեանը, չիշեցնելով, որ նոր Ընտրական օրէնսգրքը խորհրդարանում ընդունուել է անհրաժեշտ ձայներէից աւելի մեծամասնութեամբ, յայտարարել է, թէ օրէնսգրքն ընդունուել է լայն կոնսենսուսի հիման վրայ:

Օրէնսգրքի նախագծի շուրջ իշխանութիւնները հետ քաղաքացիական հասարակութեան կողմից բանակցող Դանիէլ Իոաննիսեանի պնդմամբ՝ իրականում կոնսենսուս չի եղել, իսկ ընդդիմութեան ու քաղհասարակութեան հետ բանակցութիւնները ձեւական բնոյթ են ունեցել. - «Քննարկումներ արեցին՝ 4+4+4-ը, բոլորս չիշուեմ ենք,

բայց դա աւելի դեկորատիւ էր, ըստ էութեան այդ 4+4+4-ի արդիւնքում որեւէ էական փոփոխութիւն փաստաթուղթը չկրեց: Ես կարող եմ ասել, որ այն քուլիսային բանակցութիւնները եւ քննարկումները, որ ընթանում են հիմա, շատ աւելի պրոդուկտիւ են, եւ ակնկալիք կայ, որ արդիւնքում Ընտրական օրէնսգրքը մի քիչ աւելի էական փոփոխութիւններ կը կրի ու իրապէս գոնէ մի քիչ կը բարելաւուի: Իշխանութիւնները յստակ տեսան, որ միջազգային հանրութիւնը այդքան էլ բաւարարուած չէ Ընտրական օրէնսգրքով, քանի որ մենք բաւարարուած չենք, Հայաստանի հասարակութիւնը բաւարարուած չէ:

4+4+4 ձեւաչափով իշխանութեան հետ բանակցող ընդդիմադիրներն ու քաղհասարակութեան ներկայացուցիչները 5 հիմնական օրէնսգրքում ընդգրկելու համար, ընտրողների ցուցակների հրապարակում, ցուցակների մաքրում, պարզ համամասնական ընտրակարգի ներդրում, պետութեան կողմից ընտրատեղամասերում տեսախցիկների տեղադրում եւ անցում մատնահետքերով նոյնականացման համակարգի:

Ժիրայր Սեֆիլեանը «Ազգային Դիմադրութեան Կոմիտէ» Է Ստեղծում

«Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատի միասնական շտաբի պետ Ժիրայր Սեֆիլեանը «Ազգային դիմադրութեան կոմիտէ» է ստեղծում, որի շրջանակում չի բացառում համագործակցութիւնը նաեւ ԼՂՀ պաշտպանութեան բանակի նախկին հրամանատար, պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբանանի հետ:

«Մենք պէտք է մտքի լիզացնենք մեր բոլոր ռեսուրսները: Կոմիտէի ստեղծման պատճառներից մէկն այն է, որ վարչախումբը գտնուում է յանցաւոր անգործութեան մատնուած, յանցաւոր անգործութիւն է ցուցաբերել եւ ցուցաբերում, դրա ապացոյցն են ապրիլեան դէպքերը», - լրագրողների հետ հանդիպմանն ասել է Ժիրայր Սեֆիլեանը՝ նշելով, որ կը համագործակցեն նրանց հետ, ովքեր իրենց գաղափարներին կողմնակից կը լինեն:

Հարցին՝ հնարաւոր է՞ Սամուէլ Բաբանանին էլ լինել այդ ցանկում, Ժիրայր Սեֆիլեանը դրական պատասխան է տուել:

Ժիրայր Սեֆիլեանը նշել է, որ մարդկանց պէտք է հետաքրքրել ինչու էր Սամուէլ Բաբանանը պարտադրուած երկար տարիներ բացակայելու Հայաստանից:

«Որոնք էին այն երաշխիքները, որ Ռուսաստանում Սամուէլ



«Նոր Հայաստան» նախաձեռնող Լրասնական շտաբի պետ Ժիրայր Սեֆիլեան

Բաբանանին որեւէ վտանգ չէր սպառնում՝ հասկանալով՝ հակառակորդը ինչպիսի հնարաւորութիւնները է տիրապետում Ռուսաստանում: Վերջապէս բոլորս գիտենք, որ պետական բարձր պաշտօնի զբաղեցնելով մարդ տիրապետում է պետական գաղտնիքների: Ինչպէ՞ս կարելի էր թոյլ տալ այդ մարդու պարտադրուած բացակայութիւնը Հայաստանից: Ինչ էլ լինէր ինդիւրը, ես կարծում եմ, որ հնարաւոր էր լուծում գտնել ու այդ բացակայութիւնը չլինէր», - ասել է նա՝ նշելով, որ իր կարծիքով նա պէտք է երբեք չբացակայի Հայաստանից:

Ընդդիմադիրները Չեն Հասկանում, Թէ Կառավարութիւնը Որտեղ Է Մեցաշնորհներ Փնտռում, Որ Չի Գտնում

«Բարգաւաճ Հայաստան»-ի նախագահ եւ կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Նայիրա Զոհրաբեանը պնդում է, որ փողոցում անգամ պատահական անցողիկն հարցնես, կասի, թէ ով ինչ մենաշնորհներ ունի. - «Էդ ո՞վ չգիտի, թէ ով իրաւունք ունի Հայաստանում ներկրել շաքար: Էդ ո՞վ չգիտի, թէ միայն ով Հայաստանում իրաւունք ունի ներկրել բանան: Էդ ո՞վ չգիտեր, որ Հայաստանում բենզին ներկրելու մոնոպոլիա կար: Յետոյ ասեցին, որ որոշ խոչընդոտներ կային այլոց համար բենզին, դիզելով չէր ներկրելու... Բա հիմա չիմանա՞նք էդ ովքեր էին խոչընդոտ յարուցողները. նրանք ինչ-որ այլ մոլորակայիններ էջին, չէ՞»:



«Բարգաւաճ Հայաստան»-ի նախագահ Նայիրա Զոհրաբեան

Ուղիղ մէկ ամիս առաջ վարչապետ Յովիկ Աբրահամեանը յայտարարեց, որ կառավարութիւնը գնալու է օպտիմալացման, ծախսերի կրճատման, եւ պայքարելու են կոռուպցիայի եւ մենաշնորհների դէմ:

Մէկ ամիս անց ընդդիմադիրները ամփոփում են, թէ ինչ է արել կառավարութիւնը:

Նայիրա Զոհրաբեան. - «Ինչ-որ քայլեր փորձեցին անել, որոնք ես անուանում եմ քայլիկներ: Ասենք, մեքենաների կրճատում. երբ որ նայում ես ինչ մեքենաներ են կրճատուել՝ հիմնականում մէկ կողմի ջարդոն է, որը միեւնոյն է վաղ թէ ուշ յանձնուելու էր մէկ կողմի ջարդոն: Կամ այդ ուռճացուած փոխնախարարների ինստիտուտը»:

ԲՀԿ եւ ՀԱԿ խմբակցութիւնների ղեկավարները, մինչդեռ, վստահ են, որ իշխանութիւնը կոռուպցիան եւ մենաշնորհները վերացնել չի կարող, քանի որ դա ասցնելին չի կարող, քանի որ դա ասցնելին չեն նրանց գրպանին է հարուածելու:

«Արդարացուած Չէ Մտահոգութիւնը, Թէ Հայաստանը Ռուսաստանին Է Զիջում Իր Օդային Տարածքը»

Մտահոգութիւնը, թէ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ հակաօդային պաշտպանութեան (ՀՕՊ) միացեալ տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին համաձայնագրով Հայաստանը զիջում է իր օդային տարածքը Ռուսաստանին, արդարացուած չէ, ասաց Ազգային ժողովի իշխող Հանրապետական խմբակցութեան պատգամաւոր Սամուէլ Ֆարմանեանը:

«Հայաստանի Հանրապետութիւնը, լինելով Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) անդամ եւ հիմնադիր պետութիւն, երբ խօսքը գնում է հակաօդային պաշտպանութեան ոլորտում միասնական համակարգի ստեղծման մասին, մենք

Արտաքին յարաբերութիւնները յանձնաժողովում մանրամասն քննարկել ենք, եթէ մեզանից որեւէ մէկն ուշադրութեամբ կարգաչ համաձայնագրի տեքստը ինքնին, մենք կը հասկանանք, որ ոչ թէ Հայաստանի Հանրապետութիւնը զիջում է իր օդային տարածքը Ռուսաստանի Դաշնութեանը, այլ ձիշդ հակառակը՝ ստեղծում է միասնական համակարգ, որտեղ հրամանատարական, յայպէս ասած, վահանակը գտնուում է Հայաստանի Հանրապետութեան հակաօդային պաշտպանութեան ուժերի ձեռքում, որը ինքնին տրամաբանական է, անհրաժեշտութեան դէպքում ընդհանուր ինդիւրները լուծելիս», - ասաց Ֆարմանեանը:

Զինուած Ուժերի Ստորաբաժանումներում Մեկնարկել են Հսկողական Ստուգումներ

Զինուած ուժերի 2016թ. պատրաստութեան պլանի համաձայն՝ զինուած ուժերում առաջին ուսումնական փուլի աւարտի շրջանակում յունիսի 13-ին ԶՈւ ստորաբաժանումներում շարային ստուգատեսների անցկացմամբ մեկնարկել են ամփոփիչ հսկողական ստուգումները: Հսկողական ստուգումների նպատակն է գնահատել զորքերի եւ դրանց կառավարման մարմինների մարտական պատրաստականութիւնը, ստորաբաժանումների ներդաշնակման մակարդակը, զորքերի

ծառայութեան, մարտական պատրաստութեան, զինուորական կարգապահութեան եւ բարոյահոգեբանական ապահովման վիճակը:

Տեսական եւ գործնական պարպումները միջոցով գնահատուելու է նաեւ ստորաբաժանումների եւ անձնակազմի մարտական, կրակային, մարտավարամասնագիտական, ֆիզիքական, զորահաւաքային եւ տեխնիկական պատրաստուածութիւնն ու ապահովման միջոցների համապատասխանութեան մակարդակը:

Զերբակալուել են Պետական Առողջապահութեան Գործակալութեան Պետն Ու Այլ Պաշտօնեաներ

Զերբակալուել են ՀՀ առողջապահութեան նախարարութեան պետական առողջապահութեան գործակալութեան պետ Սարո Մատուրեանը, Երեւանի քաղաքային կենտրոնի պետ Արսէն Սեդրակեանը, գործակալութեան բժշկական ծառայութիւնների գնման եւ տեղեկատուական բաժնի նախկին պետ Սամուէլ Խարազեանը: Նրանք կասկածուած են պաշտօնական դիրքը չարաչափելու մէջ:

Զեռք բերուած ապացոյցներով կայացուող դատավարական որոշումների մասին կը տեղեկացնենք լրացուցիչ:



ԼՈՒՐԵՐ

### Ջեմ Օզդեմիր.- «Խօսքը Գերմանիոյ Պատասխանատուութեան Մասին Է Երդողանը Զի Կարող Մեզ Արգելել»

Գերմանիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանութեան հետ կապուած բանաձեւում խօսել ենք Գերմանիայի պատասխանատուութիւնի եւ ոչ մէկ, այդ թւում Թուրքիայի նախագահը, մեզ չի կարող արգելել: Գերմանական հեռուստաընկերութիւններէն մէկի եթերում յայտարարել է Գերմանիայի խորհրդարանի թուրք պատգամաւոր Ջեմ Օզդեմիրը:



Գերմանիայի խորհրդարանի թուրք պատգամաւոր Ջեմ Օզդեմիր

Կարդացողը տեսնուի կամ չեն լսել իմ ելույթը: Մենք այստեղ Գերմանիայի պատասխանատուութիւնից ենք խօսում: Ոչ մէկ չի կարող մեզ արգելել, այդ թւում Թուրքիայի նախագահը»,-ասել է Ջեմ Օզդեմիրը:

Ինչպէս տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակօս»-ը. Ջեմ Օզդեմիրը յայտարարել է, թէ Բունդեսթագում Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի ընդունումից յետոյ թուրք պատգամաւորները շարունակական սպառնալիքներ են ստանում: «Ցաւալի է, որ բոլոր ազգերում էլ ֆանատիկոններ կան: Սակայն ամենակարեւորը դրանց առաջ չիտնարհուելն է: Նրանք, ովքեր միանգամից կատաղել ու անկիրթ յայտարարութիւններ են անում, հաստատ չեն

### Սպառնում են Կրկնել Հայերի Տեղահանումը

Թուրքական Sabah թերթի փոխանցմամբ՝ «Ազգայնական շարժում» կուսակցութեան (ԱԾԿ) առաջնորդ Դեւլեթ Բահչելին կուսակցական ժողովում դատապարտել է Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող բանաձեւի ընդունումը: Բահչելին «ճիշդ» է համարել 1915-ին հայերին տեղահանելու որոշումը՝ յայտարարելով, որ հակառակ դէպքում սպառնալիքի տակ կը դրուէր ազգի գոյութիւնը. «Հայերը ապստամբել էին եւ զբաղուում էին ապստամբական ու ահաբեկչական գործողութիւններով, եւ նրանց տեղահանելու նպատակը պետութեան անվտանգութեան ապահովումն էր»:



ԱԾԿ առաջնորդ Դեւլեթ Բահչելի

հայ բնակչութեան թիւը «կազմել է» 1.250.000 մարդ: Անդրադառնալով Թուրքիային ցեղասպանութեան մէջ մեղադրողներին՝ Բահչելին զարմանք է արտայայտել, որ նրանք լուծ են «հայերի իրականացրած սպանդների» կապակցութեամբ. «Մեզ մարդկութեան դասեր տալը ողբերգակատակերգութիւն է»:

Բահչելին ընդգծել է, որ եթէ ներկայումս նոյնպէս ստեղծուի նման իրավիճակ, ապա «պէտք է կրկնել» տեղահանումը: Բահչելին չի համաձայնուել, որ մէկ դար առաջ Օսմանեան կայսրութիւնում սպանուել է 1.5 միլիոն հայ՝ յայտարարելով, որ այն ժամանակ

### ԱՄՆ-ը Կ'օգնի Հայաստանին Թուլացնել Տնտեսական Կախուածութիւնը Ռուսաստանից

Միացեալ Նահանգները կ'օգնի Հայաստանին բարելաւել տնտեսական իրավիճակը եւ ինտեգրուել Հարաւային Կովկասի էներգետիկ համակարգի մէջ: Այս մասին Ուաշինկթընում յայտարարել է ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալութեան ղեկավարի՝ Եւրոպայի եւ Եւրասիայի հարցերով օգնական Թոմաս Մելիան, փոխանցում է «Ամերիկայի ձայնը»: Խօսելով Գոնկրէսում անցնող լսումների ընթացքում՝ Մելիան ներկայացրել է 2017-ի ընթացքում տարածաշրջանի երկրներին ուղղուող ամերիկեան օգնութեան առաջնահերթութիւնները.

մէջ: Օգնութեան մի մասը միտուած է լինելու նաեւ երկրի ներսում տեղական ինքնակառավարման ամբողջականը»:

2017 թուականին Սպիտակ Տան կողմից առաջարկուած պետպիւտճէի նախագծի համաձայն, Հայաստանին ուղղուող ամերիկեան օգնութիւնը պէտք է աճի 22 տոկոսով, կազմելով 22 միլիոն դոլար: Դրանից բացի Միացեալ Նահանգները 3 միլիոն տոլարից աւելի տրամադրելու է Հայաստանի ռազմական եւ իրաւապահ համակարգերի զարգացման համար: Ամերիկեան օրէնսդիրներին շատերը սակայն պիւտճէի լսումների ընթացքում դեռ նախատեսում են զգալիօրէն աւելացնել Հայաստանին յատկացուող ամերիկեան օգնութեան ծաւալը:

Ելույթ ունենալով լսումների ընթացքում, գոնկրէսական Դեյնա Ռորաբահերն ընդգծեց, որ Միացեալ Նահանգներն ունի կարելոր

«Հայաստանին ուղղուող մեր օգնութիւնը թոյլ կը տայ Հայաստանին նուազեցնել տնտեսական կախուածութիւնը Ռուսաստանից: Այն Հայաստանին նաեւ թոյլ կը տայ ինտեգրուել տարածաշրջանային էներգետիկ համակարգերի

### Պուտինը Յունիսի 20-ին Պետերբուրգում Ալիեւի Եւ Սարգսեանի Հետ Կը Քննարկի Ղարաբաղի Հարցը

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Յունիսի 20-ին Սանկտ Պետերբուրգում առանձին հանդիպումներ կ'ունենայ Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներ Սերժ Սարգսեանի եւ Իլհամ Ալիեւի հետ, իսկ յետոյ տեղի կ'ունենայ Ղարաբաղի հարցով եռակողմ հանդիպում: Այս մասին յայտնել է ՌԴ նախագահի օգնական Եուրի Ուշակովը, փոխանցում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

«Յունիսի 20-ին Պետերբուրգում պլանաւորուած են Ռուսաստանի, Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահների եռակողմ բանակցութիւնները Լեւոնային Ղարաբաղի յայտնի խնդրի կարգաւորման հարցով: Ենթադրուած է, որ սկզբում Պուտինը առանձին առանձին կը հանդիպի Սարգսեանի եւ Ալիեւի հետ, իսկ յետոյ երեք նախագահները միասին բանակցութիւններ կը վարեն»,- ասել է Ուշակովը:

Նրա խօսքով՝ ռուսական կողմնակալները կը փորձի աջակցել կողմերին հակամարտութեան լուծման գործում: «Մենք արդէն խաղացել ենք եւ կ'ասէի վճակական դեր ընթացող մարտական գործողութիւնների դադարեցման համար»,- ասել է նախագահի օգնականը:

«Հիմա մենք պատրաստ ենք շարունակել մեր միջնորդ առաքելութիւնը, բնականաբար, լիովին համագործակցելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ միւս պետութիւնների հետ եւ 2009-

2013-ի ընթացքում Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների համատեղ յայտարարութիւնների հիման վրայ շարադրուած սկզբունքների հիման վրայ: Ռուսական կողմը ամենաշահագրգիռ եւ ակտիւ բանակցութիւնները կը վարի»,- ասել է նա:

Ուշակովի խօսքով՝ Ռուսաստանը մտադիր է շարունակել իր միջնորդ առաքելութիւնը ՌԴ-ի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների համատեղ յայտարարութիւնների հունով, որոնցում խօսուած է Լեւոնային Ղարաբաղի խնդրի ուժային լուծման անթոյլատրելիութեան մասին, ինչպէս նաեւ կոչեր են պարունակուած Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներին վիճելի հարցերը լուծել ուժ չկիրառելու կամ ուժ կիրառելու սպառնալիքի անթոյլատրելիութեան, պետութիւնների տարածքային ամբողջականութեան, ժողովուրդների իրաւահաստատութեան եւ ինքնորոշման իրաւունքի սկզբունքների հիման վրայ:

ՌԴ նախագահի օգնականը յաւելել է, որ Ռուսաստանը ելնում է նրանից, որ հակամարտութեան կողմերը պէտք է խստօրէն պահպանեն 1994-ի հրադադարի համաձայնագիրը: «Հակամարտութեան բոլոր կողմերին կոչ ենք անում զսպուածութիւն ցուցաբերել, հրաժարուել ուժ կիրառելուց եւ ձեռնարկել բոլոր միջոցները իրադրութեան կայունութեան համար»,- յաւելել է նա:

### Արկադի Ղուկասեանը ԼՂՀ Նախագահ Դառնալու Ցանկութիւն Զուլնի

Արցախի նախկին նախագահ Արկադի Ղուկասեանը ԼՂՀ նախագահ դառնալու ոչ մի հաւակնութիւն եւ ցանկութիւն չունի: Այս մասին, նա նշել է Յունիսի 12-ին, Կոմիտասի անուան պանթէոնում, լրագրողների հետ զրոյցում: Նա ասաց, որ շատ ցանկութիւններ ունի, սակայն ոչ նախագահ դառնալու:



ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասեան

Անդրադառնալով ԼՂՀ պաշտպանութեան նախկին նախարար Սամուէլ Բաբեանի վերադարձին, Ղուկասեանը նշեց, որ այդ մասին խօսել չի ցանկանում:

Հայաստանի նախկին վարչապետ, քաղաքական գործիչ Անդրանիկ Մարգարեանի ծննդեան օրը, ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանը, Երեւանի քաղաքապետ Տարօն Մարգարեանը, նախարարներ ու ՀՀԿ-ական պատգամաւորներ այ-

ցելել են Կոմիտասի անուան պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու նրա յիշատակին:

մի յատկութիւն՝ միւսների հետ կիսուելու կարեւորութեան գիտակցում.

«Ես միշտ հպարտ եմ եղել ամերիկեան ժողովրդի մեծահոգութեամբ՝ նրանք միշտ պատրաստ են ձեռք մեկնել կարիքաւոր բոլոր մարդկանց, նոյնիսկ եթէ նրանց երբեք չեն հանդիպել»:

Ի դէպ, Ատրպէյճանին յատկացուող ամերիկեան օգնութիւնը, որը

Հայաստանին յատկացուող օգնութիւնից աւելի քան երկու անգամ պակաս է, ուղղուած է հիմնականում Ատրպէյճանում ժողովրդավարութեան եւ բաց հասարակութեան զարգացմանը: ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալութեան ներկայացուցչի խօսքով, որոշում ընդունելիս, հաշուի է առնուել այդ ոլորտում Ատրպէյճանի լուրջ յետոյնթացը:

Save Support Sustain logo with Syrian Armenian Relief Fund details and website information.



### Լիբանան Շնորհակալական Այցելուքիւն Գերմանիոյ Դեսպանին



Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինի պատուիրակութիւնը, գլխավորութեամբ ատենապետ Ընկ. Կիրակոս Թիւթիւնճեանի եւ ընկերակցութեամբ պետական երեսփոխան Մեթր Սերժ Թուրսարգիսեանի, Չորեքշաբթի Յունիս 8-ին, այցելեց Լիբանանի մօտ Գերմանիոյ դեսպանատուն, ուր տեսակցեցաւ դեսպան Մարթին Հուլի հետ, ողջունելու համար Գերմանիոյ խորհրդարանին մէջ Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի վաւերացումը:

դեսպանին յանձնեց Պունտսթակի նախագահին ուղղուած նամակ մը, որուն մէջ շնորհակալութիւն կը յայտնէ բանաձեւի վաւերացումին համար, գնահատելով խորհրդարանի նախագահին ու բոլոր երեսփոխաններուն ջանքերը:

«Մենք լաւ կը գիտակցինք, որ Գերմանիա Եւրոմիութեան սիրտն է, ուստի այս ճանաչումը շատ կարեւոր է համայն հայութեան համար», ըստ ինքնիքի հնչակեան կուսակցութեան նամակին մէջ:

Կուսակցութեան պատուիրակութիւնը դեսպան Հուլի հետ նաեւ քննարկեց ընդհանուր զարգացումները:

### Մասաչուսեթցի Մէջ Գերմանիոյ Ուղղուած Շնորհակալութեան Պաստառներ



Գերմանիոյ շնորհակալութեամբ յայտնող պաստառ Մասաչուսեթցի մէջ

Peace of Art կազմակերպութիւնը Մասաչուսեթցի նահանգի Ֆոքսպորո քաղաքին մէջ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալուն համար՝ Գերմանիոյ ուղղուած շնորհակալութեամբ պաստառ է տեղադրուած է:

«Ճշմարտութիւնը ընդդէմ ազգային շահի» գրառումով պաստառի վրայ գերմանական դրօշն է, ինչպէս նաեւ Ամերիկայի Գոնկրէսի

սի գմբէթը:

Peace of Art-ի ղեկավար Դանիէլ Վարուժան Խաչինեան յայտարարած է, որ հայերը երախտագիտութիւն են կը յայտնեն Գերմանիոյ՝ Հայոց ցեղասպանութիւնը ճանչնալուն համար, նաեւ կոչ կ'ընեն Ամերիկային, յանուն ճշմարտութեան հետեւելու Գերմանիոյ օրինակին, մէկ կողմ դնելով տնտեսական շահերը:

### Հնչակեան Կուսակցութեան Շնորհաւորական Այցելուքիւնը

Շարունակուած է 1-էն լու կոչուած Հոգ. Բագրատ Վրդ. Պերճէքեանի կողմէ:

Ողջունելու խօսքով հանդէս եկաւ Յովնան Սրբազան եւ դրուատալից արտայայտութիւններ ունեցաւ Հնչակեան կուսակցութեան եւ յարակից կառույցներու ազգանուէր

գործունէութեան մասին: Ան բարձր գնահատեց նաեւ Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններու եւ հայապահպանման գծով Մայր Կուսակցութեան գովելի ներդրումը տարբեր գնազաւանդներու մէջ:

Իր ելլովին մէջ Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Գրիգոր

### Կեանքից Զեռացաւ Օֆելիա Զամբարձումեանը

91 տարեկանում կեանքից հեռացել է անուանի երգչուհի, ժողովրդական արտիստուհի Օֆելիա Զամբարձումեանը:

Օֆելիա Զամբարձումեանը ծնուել է 1925 թուականի Յունուարի 9-ին Երեւանում, սովորել եւ աւարտել է Ռոմանոս Մելիքեանի անուան երաժշտական ուսումնարանն ու հրաւիրուել ուստիոյի ժողովրդական նուագարանների անսամբլ, որին գրեթէ մի ամբողջ կեանք է նուիրել:

Երգացանկն ընդգրկում է հիմնականում հայ ժողովրդական, գուսանական եւ աշուղական, ինչպէս նաեւ՝ կոմպոզիտորական երգեր: Երգչուհու ստեղծագործութեան մէջ առաջնային տեղ են զբաղեցրել Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնները՝ «Ես կանչում եմ լալային», «Զկայ քիզի նման» եւ այլն: Երգել է Ֆարհադի, Միսկին Բուրջիի, Զիվանու, Շերամի երգերը, աշուղներ Հաւասու, Աշոտի եւ Շահէնի ստեղծագործութիւններից շատերի



Անուանի երգչուհի, ժողովրդական արտիստուհի Օֆելիա Զամբարձումեան

առաջին կատարողն է եղել: Աշուղ Աշոտը խոստովանել է, որ «Օճախում», «Դու ծաղկավառ Զանգեզուրի» եւ մի շարք այլ երգեր յորինել է յատկապէս Օֆելիա Զամբարձումեանի համար, Շահէնն էլ իր «էլիսար» պոէմն է գրել երգչուհու համար:

### Շնորհակալական Այցելուքիւն Գերմանիոյ Քիւպատոսարան



Շարունակուած է 1-էն

Յունիսի Չին Պունտսթակի կողմէ վաւերացուած հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւը, կ'ընդունի նաեւ Գերմանիոյ մեղսակցութիւնը եւ կոչ կ'ուղղէ վնասուց հատուցման կատարելու:

Խօսակցութեան նիւթ դարձաւ նաեւ ցեղասպանութեան 100 ամեակին առթիւ Հոռմի Ֆրանցիսկոս Սրբազան քահանայապետի եւ Գերմանիոյ նախագահ Եռաքիմ Կառքի ցեղասպանութեան ճանաչման

ի նպաստ ելոյթները, որոնք համաշխարհային հանրային կարծիքի ուշադրութեան արժանացան:

Իր պատասխան խօսքին մէջ հիւպատոսի պաշտօնակատար Սթեֆան Պէյտերմանն ըսաւ. «Գերմանիոյ պատմական պատասխանատուութիւնն էր հայոց ցեղասպանութեան ճանաչման ապահովումը՝ պատմական իրողութիւնները հաստատելու համար, այդպիսով նպաստելու համաշխարհային արդարութեան հաստատման եւ մարդկային իրաւունքներու պաշտպանութեան»:

Խոստանեան, պատուիրակութեան անունով շնորհաւորեց Յովնան Սրբազանի առաջնորդ վերընտրուելը յառաջիկայ եօթ տարիներու համար, միաժամանակ գովեստով անդրադարձաւ Սրբազանի անցնող 14 տարիներու արդիւնաւէտ գործունէութեան մասին, մաղթելով նորանոր յաջողութիւններ՝ իր յետագայ ծրագրերներուն:

Յովնան Սրբազանի բեղուն աշխատանքներուն մասին ելոյթներ ունեցան Տոքթ. Արշակ Գազանճեան եւ Գաբրիէլ Մոլոյեան:

Այս առթիւ խօսք առին նմանապէս թեմականի ատենապետ Տիար Ժոզեֆ Կանիմեան եւ առաջնորդի օգնական Հոգ. Բագրատ Վրդ. Պերճէքեան: Անոնք եւս դրուատեցին Հնչակեան կուսակցութեան հայրենանուէր ծառայութիւններն ու գործօն ներկայութիւնը այս գաղութէն ներս:

Շուրջ մէկ ժամ տեւող սոյն հանդիպման ընթացքին խօսակցութեան նիւթ դարձան նաեւ Հայրենիքն ու Արցախը յուզող կարգ մը հարցեր:



# ՎԵՐՁԻՆ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՓԼՈՒՋՈՒՄԸ - Ա ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԲԾԱԽՆԴՐՈՒԹԵԱՄԲ

## ԷՏՈՒԱՐՏ Ա. ԳՐԻԳՈՐԻԱՆ

Բ. Աշխարհամարտն էտք սկսուած եւ մինչեւ անցեալ դարու իննսուականները շարունակուող «պող պատերազմի» խառնակ ու անկանխատեսելի ժամանակները մերօրեայ աշխարհաքաղաքական դէպքերուն համեմատ մանկական խաղ կը յիշեցնեն:

Այդ ո՛չ հեռուոր ու «երանելի» օրերուն, երկիրներու քաղաքական գործիչներն ու պետութիւններու օրէնսդիր մարմինները, ամրան ընթացքին կը վայելէին իրենց «վաստակած» հանգիստի իրաւունքը եւ քաղաքական դաշտը, առնուազն մէկ-երկու ամիս կ'ամապանար:

Հիմա այդպէս չէ, վտանգաւորին սահմանը շատոնց անցած աշխարհաքաղաքական գարգացումները այլեւս նկատի չեն առնել տարուան եղանակները եւ աւելին՝ թիկունքէն գիրար կը հարուածեն ճիշդ այն ատեն, երբ դիմացինը բնաւ չ'ակնկալել նմանօրինակ սաղարանք...

Ամիսներ առաջ, երբ Մերձաւոր Արեւելքի գաղթականներուն օժանդակելու համար Եւրամիութիւնը վեց միլիառ տոլար խոստացած էր Թուրքիոյ, «Արարատ» օրաթերթը գրեց, որ եղածը միայն քաղաքական աճաբարութիւն է: Հակառակ «թրքական քաղաքական միտքի ճկունութեամբ» հիացողներուն՝ օրաթերթը գրեց նաեւ, թէ Եւրոպան, իր ամբողջ պատմութեան ընթացքին, երբեք անշահախնդիր նիւթական օգնութիւն չէ ցուցաբերած եւ ոչ մէկ պետութեան: Եւ, եթէ նոյնիսկ պատահած է, ապա յատուկ դիմացինին քաղաքական զգոնութիւնը տկարացնելու նպատակով: Այդպիսին է եւրոպական քաղաքականութիւնը եւ այստեղ դիւանագիտական առումով ոչինչ կայ պահարակելի:

Ով՞ ով, սակայն հայ ժողովուրդին շատոնց ծանօթ են քաղաքական այդ խարդաւանքները:

...Սոյն տարուան Յունիս 2-ին, Գերմանիոյ Պոլստեսթակը ընդունեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւը, որ ունի՝ «1915 թ. հայերու եւ միւս քրիստոնեայ փոքրամասնութեանց Յեղասպանութեան յիշատակի եւ ոգեկոչման մասին» անուանումը:

Բանաձեւը ընդունուած է ճշող մեծամասնութեամբ՝ ունենալով ընդամենը մէկ դէմ եւ մէկ ձեռնպահ ձայներ: Եւրոպական ընդունումը միա-

ձայն ընդգծած են անցեալի հետ առեւտուածի անհրաժեշտութիւնը, նաեւ՝ Հայաստանի եւ Թուրքիոյ հաշտեցման գործընթացին նպաստելու մղումները:

Պոլստեսթակի մէջ բարձրաձայնած են նաեւ Օսմանեան Թուրքիոյ ոճրագործութեան մասին, նաեւ այն մասին, որ Գերմանիոյ քայլը ոչ թէ հայց է եւ մեղադրանք, այլ խոնարհում՝ գոհերու յիշատակին առջեւ:

Եւ, ըստ մեզի, ամէնէն կարելորը, ընդունուած բանաձեւին մէջ յստակօրէն ընդգծուած է Օսմանեան կայսրութեան դաշնակից Գերմանիոյ մեղսակից դերակատարումը Հայոց Յեղասպանութեան մէջ:

Պոլստեսթակի մէջ Հայոց Յեղասպանութեան մասին բանաձեւի ընդունումէն վերջ նիստերու դահլիճին մէջ ներկայ հայերը իրենց շնորհակալութիւնը յայտնող պատաններ եւ Հայաստանի դրօշակը բարձրացուցին:

Պերլին հաւաքուած հայերը որոշման հրապարակումէն վերջ հայոց աւանդական Քոչարին պարեցին՝ ծածանելով Հայաստանի Հանրապետութեան եւագոյնը...

Գերմանիոյ Պոլստեսթակի պատմական այս որոշման մասին իրենց կարծիքները յայտնեցին նաեւ Անդրկովկասի մէջ՝ Գերմանիոյ գլխաւոր հովանաւորեալ Վրաստանի քաղաքական գործիչները, որ այսպիսի պարագաներու համար բացառիկ իրողութիւն է: Այս հանգամանքը անգամ մը եւս կը հաւաստէ, որ այս ամբողջ լաւագոյնս ծրագրուած եւ լրջագոյն քաղաքական միջոցառում էր:

Ահա, թէ ինչ կը գրէ վրացի յայտնի քաղաքագէտ Կէլա Վասաձէ. «Այս պարագային տուեալ բանաձեւը միանշանակ քաղաքական քայլ էր: Ես գիտեմ նաեւ, որ մէկ պատգամաւոր դէմ եղած է, միւսը՝ ձեռնպահ, իսկ մնացեալները՝ կողմ: Ըստ իս, այս քայլը պայմանաւորուած է Թուրքիա-Գերմանիա փոխյարաբերութիւններով: Կը կարծեմ, թէ այստեղ պէտք է նկատի առնել այն, որ էրտողան կը շարունակէր բաւական կոշտ պայմաններ առաջադրել Եւրամիութեան:

Ինչ կը վերաբերի այն հարցին, թէ ասիկա արդեօ՞ք Գերմանիոյ կողմէ Թուրքիոյ հասցուած ապտակ էր, ապա ես բնաւ հակուած չեմ այս կամ այն պետութեան քայլերուն մէջ զգացականը տեսնել, այլ միայն իրատեսական, սառնասիրտ ու ճշգրիտ հաշուարկներ:

Գերմանիան հիմա կրնայ օրինակ ծառայել՝ իր անցեալին հետ առեւտուածի առումով, սակայն իւրաքանչիւր երկիր ինքնուրոյն պէտք է գայ այդ ըմբռնման»:

Վրաց քաղաքագէտին միտքը կը զարգացնէ գերմանացի պատգամաւորը. «Պոլստեսթակի այս բանաձեւը բարոյապէս պատուարժան քայլ է, ինչպիսին տարիներ առաջ Ֆրանսայի Ազգային ժողովին որոշումն էր»:

Սխալ, եթէ ոչ մոլորեալ են անոնք, որոնք կը կարծեն, թէ Թուրքիոյ քաղաքական հոգեւոր հայրիկը Ամերիկան է: Միակ հաւատարիմ ու ինքնակալ «հայրիկը» միշտ ալ Գերմանիան եղած է, եւ Օսմանեան կայսրութեան ու յետագային նաեւ Թրքական հանրապետութեան արիւնալի գոյութեան ամբողջ ընթացքին անոնք՝ «հոգեւոր հայրիկը» այդ անպատուաբեր կոչումին արժանանալու համար միշտ առճակատած են այսպիսի յաւակնութիւններ ունեցող ուրիշ քաղաքական «բորենի» մը՝ Մեծն Բրիտանիոյ հետ:

Այս օրերուն, սակայն, կատարուած է այն, ինչ կատարուած է՝ Գերմանիան ընդունած է Հայոց Յեղասպանութիւնը, մասնակիօրէն մատնանշելով իր մեղսակից գործունէութեան մասին:

Եւ այս ամբողջը կատարած է դոյզն իսկ չընդունող գերմանական աւանդական քաղաքականութեան հաշուենկատութեան, գաղտնապահութեան եւ հարուածին դիպուկութեան սկզբունքայնութեան:

Նոյնիսկ քաղաքականութեան հետ կապ չունեցող մարդիկ չեն կրնար պատահականութիւն սեպել արդէն իսկ պատմական դարձած այն հանգամանքը, որ գերմանական Պոլստեսթակի կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը տեղի ունեցաւ ճիշդ ու ճիշդ այն օրը, երբ 95 տարի առաջ, Պերլինի մէջ, ծայր առաւ արիւնարբու Թալէաթ փաշան դիտապատ ընող Սողոմոն Թեւլէրեանի դատավարութիւնը...

1921 Յունիս 2-ին գերմանական դատարանի մէջ Սողոմոնին դատապաշտպան դոկտոր Նիմայէր Քիր իր պաշտօնական ճառին մէջ ըսաւ.

«Սողոմոն Թեւլէրեան ինք չէր, որ փողոց կ'իջնէր Թալէաթ փաշան սպաննելու, անոր հետ կ'իջնէին դարերը, միլիոնաւոր սպաննուածները:

Ան իր ձեռքով իր ամբողջ ժողովուրդին պատուոյ դրօշակը

կը տանէր, ողջ-ողջ խոշտանգուածներուն, իր լլկուած ընտանիքին դրօշակը...»:

Գերմանիոյ մէջ հինգ միլիոն թրքական համայնքի առկայութեամբ, այս մէկը յիշուաւ, էրտողանին եւ անոր համախոհներուն հասցուած ամէնէն մեծ ապտակն էր: Ապտակ էր նաեւ բոլոր անոնց համար, որոնք առ այսօր ծանօթ կենդանիին յամառութեամբ կը հաւատան թրքական դիւանագիտութեան՝ ճկուն եւ իմաստուն ըլլալու մասին հեքիաթներուն:

Ըսուածին լաւագոյն վկայութիւնը այն փաստն է, թէ ինչպէս արձագանգեցին թրքական իշխանութիւնները Գերմանիոյ խորհրդարանի կողմէ Հայոց Յեղասպանութեան մասին բանաձեւի ընդունման:

Թուրքիոյ նախագահ Ռեճէփ Թայիպ Էրտողան նախ յիշեցուց, որ Թուրքիոյ տարածքին շուրջ 100 հազար հայ կը բնակի. «Անոնց կէսը մեր քաղաքացիներն են: Եթէ մենք նրբանկատ չըլայինք, մեր ոչ քաղաքացի հայերը ինչո՞ւ պիտի պահէինք»:

Եւրոպայի պէս զանոնք Հայաստան կը դրկէինք եւ օր մը պիտի ընենք ասիկա...»:


Այսպէս սպառնացած է էրտողան, որ, ի դէպ, այսօրինակ սպառնալիքներ հնչեցուցած էր նաեւ անցեալ տարի: Թուրքիոյ նախագահը յայտարարած է, թէ՛ Գերմանիան ամենավերջին երկիրն է, որ իրաւունք ունի գիրենք ցեղասպանութեան մեջ մեղադրելու եւ գերմանացիներուն դիմելով՝ խորհուրդ տուած է վերանայիլ Հոլոքոսթի ճանաչումը: «Դուն ո՞ր պետութեան ի՞նչ կ'ընես, յոխորտացած է ան Գերմանիոյ հասցէին, անգամ մը եւս կ'ընդգծեմ, մենք մեր անցեալին ամենալու պատճառ չունինք: Սակայն մեզ, Հայոց Յեղասպանութեան մասին բանաձեւերով սպառնացող երկիրներէն ամէն մէկուն ետին միլիոնաւոր անմեղ մարդոց արիւնը կայ»:

Հոս թերեւս ճիշդ է էրտողան, սակայն այն վերապահութեամբ, որ ինչպէս միշտ, ան իր դէմ հնչող մեղադրանքներուն մասին խօսելու փոխարէն կը փորձէ մեղքի իր բաժինը բարդել ուրիշ ուժերու վրայ, որոնք այս կամ այն ձեւով գոնէ փորձ կ'ընեն մեղմել պատմական մեղագործութեան իրենց բաժինը...

Շար.ը էջ 18


**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909



**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---



**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաճեցու է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



### ԽՈՍՏՈՎԱՆՈՂՆ ՈՒ ՈՒՐԱՑՈՂԸ

#### ՍՆԻԱՆ ՏԷՑԻՐՄԵՆՃԵԱՆ

«Գերմանիա՛, նախ Ողջակի-  
զու՞մին հաշիւը տուր»:

«Հիթլերին թոռները թուրք-  
խան ցեղասպանութեամբ կ'ամբաս-  
տանեն»:

«Գերմանիա՛, նախ քու կեղ-  
տոտ պատմութիւնդ դիտէ՛»:

«Գերմանացիները կ'ուզեն Ող-  
ջակիզու՞մը տարածել աշխարհով  
մէկ, կ'ուզեն այլ ազգերուն ցոյց  
տալ, որ ինչ որ հրեաներուն պա-  
տահած է, սովորական է՝ եւ այս  
ձեւով յանցակից մը կը փնտռեն»:

Քանի մը նմոյշ այն արտա-  
յայտութիւններէն, զորս յաճախ կը  
լսենք վերջին օրերուն՝ բաւական  
բարձրաստիճան պաշտօնեաներու  
կամ նոյնքան բաւական մասնագէտ  
պատմաբաններու բերնէն:

Ժամանակի կորուստ պիտի  
ըլլար անշուշտ պատասխանել ամ-  
բոխավարական այս յայտարարու-  
թիւններուն:

Քանի որ Գերմանիա Ողջա-  
կիզու՞մին հաշիւը տուած է եւ կը  
շարունակէ տալ (եւ այնքան լուրջի  
կ'առնէ այս հարցը, որ վստահա-  
բար պիտի չհասկնայ նոյնիսկ, թէ  
ի՞նչ կը նշանակէ հաշիւ տալ՝  
հաշիւ տալ աւելի քան 6 միլիոն  
զոհերու համար)...

Քանի որ Հիթլերին անունն  
իսկ չի յիշատակուիր հանրային  
վայրերու մէջ, աներեւակայելի բան  
է որեւէ փողոց կամ վայր տեսնել  
այդ անունով, եւ պէտք է գիտնալ  
նաեւ, որ գերմանացիները իրենք  
գիրենք Հիթլերին թուր չեն նկա-  
տեր, չեն հպարտանար իրմով...

Քանի որ երեւի ոչ մէկ երկիր  
պատմութեան հետ այնքան խորին  
հաղորդակցութիւն ու առերեսում  
մը ունի գերմանացիներուն նման:  
Միայն Պերլինի մէջ կայ յիշողու-  
թեան աւելի քան 40 թանգարան,  
կեդրոն, վայր կամ ցուցադրու-  
թիւն՝ ոգեկոչելու, պատմելու, նոր  
սերունդին փոխանցելու համար  
անցեալի չարագործութիւնները  
(օր.՝ Աննա Ֆրանքի կեդրոն, Յու-  
շարձան նացիներու իշխանութեան  
օրօք զոհուած եւրոպացի ռոմանե-  
րու ու սինթիներու, Յուշարձան ի  
յիշատակ գիրքերու հրկիզման, Գեր-  
մանական դիմադրութեան յիշա-  
տակի կեդրոն, Պերլինի հրէական  
թանգարան եւ ըն. եւ ըն.):

Յատկապէս հրէական Ողջա-  
կիզու՞մի համար կառուցուած կա-  
րեւորագոյն յուշարձանը, անկաս-  
կած, Եւրոպացի սպաննուած հրեա-  
ներու յուշակոթողն է՝ մայրաքա-  
ղաքի ճիշդ կեդրոնին, Պրանտեն-  
պոլերկի դարպասէն դէպի Փոցտա-  
մի հրապարակ տանող ճանապար-  
հին (վայր մը, ուր ոչ թէ առերե-  
սումի, այլ առեւտուրի հսկայ կեդ-  
րոն մը տնկել նախընտրէին թե-  
րեւս հոսկէ հոն գերմանացիներուն  
ցուցամատ թափահարողները): Խո-  
նարհումի ու խոկումի վայր մըն է  
ան, թանգարան ու յուշարժան  
միաժամանակ, ուր մարդկային  
պատմութիւններու ընդմէջէն եղե-  
լութիւնը կը պատմուի, գոնէ զգա-  
լի կը դարձուի իր բովանդակ  
անըմբռնելիութեամբ:

Եւ դեռ կան անշուշտ խոչըն-  
դոտաքարերը, Stolperstein-ները,  
որոնք տեղադրուած են աքսորեալ,  
ապա սպանեալ հրեաներու տունե-  
րուն առջեւ: Կը սայթաքիք թեթեւ  
մը նախ, յետոյ կը ծռիք ու կը  
դիտէք յատուկ, պզտիկ քառակուսի  
յուշաքարը, կը կարդաք անունը  
այն անձին կամ ընտանիքին, որ

այդ տան մէջ կը բնակէր, սակայն  
նացիներու կողմէ աքսորուած է  
այլուր եւ չէ վերադարձած երբեք:

Կան անհատական կամ աւելի  
լաւ է ըսել՝ մասնաւոր նախաձեռնու-  
թիւններ: Օրինակ Dr. Oetker ընկե-  
րութիւնը դեռ քանի մը տարի առաջ  
խոստովանած էր իր կապերը նացի-  
ներուն հետ, նոյնը ըրած են նաեւ այլ  
ընկերութիւններ, ինչպէս BMW, Hugo  
Boss՝ ներողութիւն խնդրելով հան-  
րութենէն եւ հատուցել խոստանալով  
իրենց պատճառած բարոյական ու  
նիւթական վնասը:

Պէտք է գործնալ ուրեմն  
գիտնալով, թէ Գերմանիա 1945-էն  
վերջ փոխած է նոյնիսկ իր ազգային  
քայլերը, քանի որ անոր առաջին  
երկու տունը ցեղապաշտական միտ-  
քեր կ'արտայայտէր (թէեւ խօսքերը  
յօրինուած են 1841-ին, երբ նման  
գաղափարախօսութիւններ գոյու-  
թիւն չունէին եւ կամ դեռ հեռու էին  
վնասակար նկատուելէ):

Քիչ թէ շատ փորձեցի ուր-  
ուագրել այն մթնոլորտը, ուր տար-  
բեր ձեւով կը դատարարուի նաեւ  
մարդը, կ'ունենայ առերեսումի, պատ-  
մութեան, անցեալի, յիշողութեան,  
ուրացումի բոլորովին տարբեր ըն-  
կալում մը: Գիտէ, որ բռնութիւնը  
կը ծնի ուրացումէն: Կը հաւատայ, որ  
առերեսում հարկաւոր է խուսափե-  
լու համար նոր յանցանքներէ: Սոր-  
ված է դէպքերը կոչել իրենց անու-  
նով՝ առանց սեթեւեթանքի:

Գերմանիոյ մթնոլորտը ծնունդ  
կու տայ, կը ստեղծէ, օրինակ,  
թրքական ինքնութեան տէր ձեւ  
էօզտեմիրի նման կերպարներ,  
որոնք ճշմարտութեան համար խի-  
զախօրէն կը պայքարին, իսկ թուրք-  
իոյ մթնոլորտը, որ յայտնի է  
բոլորիս, անձերը կը վերածէ արա-  
մաթէշեաններու կամ մարգարե-  
սայեաններու, որոնք հազար ու մի  
ծամածութիւններով, անձնական  
տարբեր հաշիւներով կը նախընտ-  
րեն կեղծիքը, երբեմն՝ քծինքը,  
քան ճշմարտութիւնը: Ինչպէս կը  
տեսնուի, ազգային պատկանելիու-  
թիւնը ո'չ մէկ նշանակութիւն ունի:  
Գերմանիա թուրքը կրնայ վերա-  
ծել խոստովանողի, իսկ թուրքիս  
նոյնիսկ հայ է մը կրնայ ուրացող  
ծնիլ: Ակնյայտօրէն ուսուցանելով  
մեզի, թէ խնդիրը հայու կամ  
թուրքի մրցակցութիւն մը չէ,  
զուտ քաղաքական հաշիւ չէ, այլ  
անոնցմէ շատ աւելի տարբեր, թե-  
րեւս աւելի վեր՝ ընկալումի, մօտե-  
ցումի, մարդու որակի նիւթ մը:

Պարագայ մը եւս, զոր պիտի  
ուզէի նշել: Անհատուելի են ապր-  
ուած (չայլուած) պէտք է ըսէի) կեանքերը,  
մարդոց վկայութիւն-  
ները, կործանուած տաճարները,  
քանդուած յուշարձանները: Տար-  
բեր ազգերէ պատմաբաններու,  
լրագրողներու կամ զուտ անհատ-  
ներու կողմէ գրուած են հազարա-  
ւոր հատորներ, յօդուածներ, աւե-  
լին՝ կայ ՄԱԿ-ի

Յեղասպանութեան վերաբեր-  
եալ հռչակագիրը եւ դեռ քանիսն  
երկիրներ ալ պաշտօնապէս ճանչ-  
ցած են Հայոց Յեղասպանութիւնը,  
սակայն 1915-ը ոմանց համար, հայ  
կամ թուրք, այստե՛ղ, ա՛յս երկրին  
մէջ, ուր պատահած է դէպքը,  
տակաւին կը շարունակէ մնալ որ-  
պէս զուտ հայկական պնդում մը,  
հայերու կողմէ տրուած որակում  
մը, հայերու յատուկ մօտեցում մը:  
Գոնէ ըսէք, թէ ցեղասպանութիւնը  
պնդում մըն է, որակում, մօտեցում  
մըն է (ալ ինչ որ կ'ըսէք ուրացողի  
ձեր բառապաշարով), զոր կ'ընդու-

### ԵՐՈՊԱ ԿԸ ՀԱԿԱԴԱՐՁԷ ԷՐՏՈՂԱՆԻՆ

Եւրոխորհր-  
դարանի նախագահ  
Մարթին Շուլց սուր  
քննադատութեան  
ենթարկեց թուրքիոյ  
նախագահ Ռէճեփ  
Թայյիպ էրտողանի  
վերջին յայտարա-  
րութիւնները: Էր-  
տողանին չղուած  
նամակի մը մէջ  
Շուլց նշեց, որ  
երեսփոխանները  
երբեք պէտք չէ  
ահաբեկիչներուն  
հետ համեմատուին:  
«Նման  
մօտեցում կը համարուի կանոն-  
ներու խախտում եւ ես զայն  
վճռականօրէն կը դատապարտեմ»,  
ըսաւ Շուլց:



Իսկ Գերմանիոյ խորհրդարանի  
նախագահ Նորպրթ Լամերթ  
Պոլստեսթակի նիստին բացումը  
կատարեց սուր քննադատութի-  
ւններ արձակելով թուրքիոյ  
նախագահ Ռէճեփ Թայյիպ էրտողանի  
հասցէին: «Մասամբ ատելութեամբ  
լեցուած սպառնալիքներ արձակ-  
ւած են բարձրաստիճան թուրք  
պատասխանատուներու կողմէ:  
Ժողովրդավարական միջոցներով  
ընտրուած նախագահ մը 21-րդ  
դարուն Պոլստեսթակի թուրք  
երեսփոխաններուն քննադատութի-  
ւնը կը կապէ անոնց թրքական  
ծագումի կասկածներուն հետ, անոնց  
արիւնը փճացած կը համարէ: Ես  
այս անթոյլատրելի կը համարեմ»,  
ըսաւ Գերմանիոյ խորհրդարանի  
նախագահը: Անոր խօսքով,  
գերմանացի երեսփոխանները  
պատրաստ են քննադատութիւն  
ընդունելու, սակայն սպառնալիք

արձակողները պէտք է իմանան, որ  
կը ջարձակին ամբողջ խորհրդա-  
րանին վրայ:

Գերմանիոյ կառավարութեան  
թրքական արմատներ ունեցող  
պետական նախարար Այտան  
Օզուդուզ յայտարարեց, որ իրենք  
գիտէին թրքական դիրքորոշումը  
սակայն իրենց կարծիքը արտայայ-  
տեցին Հայոց ցեղասպանութեան  
հարցով: Ըստ նախարարին, պէտք  
չէ սպասել որ բոլորը նոյն կարծիքը  
ունենան որոշ հարցի մը շուրջ:  
«Այդ բանաձեւը երկար քննարկում-  
ներէ ետք ընդունուեցաւ: Կրնաք  
համաձայն չըլլալ բանաձեւին հետ,  
սակայն ճիշդ չէ քուէարկողներուն  
սպառնալ եւ վիրաւորել:

Թուրքիոյ մէջ կը մտածեն, որ  
մենք ըլլալով թուրք, թուրքիան  
կը ներկայացնենք խորհրդարանին  
մէջ: Այս սխալ մօտեցում է:

Մենք Գերմանիոյ երես-  
փոխաններ ենք եւ տեղի թուրքերը  
եւս կը պաշտպանենք: Ես դարձեալ  
կը շեշտեմ, որ թուրքիոյ  
երեսփոխանը չեմ», ըսաւ  
Օզուդուզ:

Նին աշխարհի քանիսնը պետու-  
թիւններ, սա ինչ քանակով ու  
ազգութեամբ պատմաբաններ, լրագ-

րողներ: Ալ հասկնալ պէտք է գոնէ  
որ խնդիրը հայու խնդիր մը չէ, այլ  
ճշմարտութեան ու իրաւունքի:

Կազմակերպութեամբ՝  
**ԿԼԵՆՏԵՅԼԻ ԱՐՄԵՆ ԿԻՏՈՒՐ  
ՄԱՍՆԱԳԻՂԻ**

**Կիրակի, Յուլիս 24, 2016**  
Առաւօտեան ժամը 10:30-էն սկսեալ  
Կարօ եւ Անի Պեքարեաններուն  
բնակարան մէջ  
3013 Emerald Isle Dr., Glendale, CA 91206

**Մուտքի Նուէր՝ \$25**  
Տոմսերու համար դիմել՝  
(818) 913-9311 • (818) 284-2155



### ՇՆՈՐՀԱԴՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրախութեամբ կ'իմանանք, որ Տիկ. Ռոզին Տէր Դաւիթեան յաջողութեամբ վկայուած է CA State University Consortium at Fullerton եւ Long Beach համալսարաններէն, պատուոյ յիշատակութեամբ արժանանալով Doctor of Nursing Practice վկայականին: Դոկտորական իր ուսումնասիրութեան մենթորն էր Դոկտ. Լուսին Տատրեան-Հաքապի:

Ապա ան Հայէպի եւ Այնթապի ճամբով կը վերադառնայ Մարաշ: Յուզախառն վերամիացում նշանածին եւ ամուսնութիւն Աւետարանական եկեղեցւոյ մէջ՝ 1919: Հօրը կը վերագտնէ, բայց մայրն ու

երկու եղբայրները մահացած են անապատին մէջ: Կ'անցնի գործի, քարոզչութեան եւ խաղաղ կեանքի... մինչեւ 1920 թ. երբ Մարաշ թիրախ կը դառնայ քեմալական զօրքերուն լքումն ու հեռացումը, ժողովուրդին խուճապային փախուստը եւ յուսահատութիւնը կը մղեն նոր տեղահանութեան: Մարաշ մոխիրներու եւ աւերակներու մէջ է. ձիւնին ու դաժան պայմաններու մէջ կը լքեն Մարաշը: Հայեր կը կազմակերպեն դիմադրութիւն եւ հաւաքական նահանջ: Ան իր տիկնոջ հետ Մարաշէն կ'անցնի Ատանա, Թարսուս, Մերսին եւ Զմիւռնիա: 1922-ին Զմիւռնիոյ անկումէն եւ հայոց ու յոյներու կոտորածէն առաջ կ'անցնի Աթէնք. կ'ունենան երկու զաւակ: Հակառակ խոր եւ անայլայլ Աստուածավախ ըլլալուն, ան կը մտորէ. «Պէտք է խոստովանիմ նաեւ, թէ ժամանակներ եղան, երբ ես չկրցայ փորձութեան դիմադրել, մտածելով, թէ՛ թերեւս Աստուած սխալած է՝ թոյլ տալով այսպիսի չարիքներու գործադրութիւնը»:

Հեղինակը աւելի ուշ կ'ապրի թափառական կեանք մը՝ Պէյրութ, Պաղատա, Դամասկոս, Հայէպ, Մուսուլ, Երուսաղէմ: Կը մահանայ 1958-ին՝ Պէյրութ՝ գրելէ եւ տպագրելէ յետոյ իր սոցն յուշագրութիւնը:

Հատորին մէջ կան լուսանկարներ, քարտէզներ: Տեղանուններու եւ յատկանշական դէմքերու ծանօթագրութիւնները կատարած է խմբագիրը (21 շղթա): Որպէս «Յաւելուած» տրուած է Գր. Գալուստեանի մէկ յօդուածը Մարաշի մասին («Աւետաբեր» 7 Մարտ 1908, թիւ 10):

Գիրքը գեղարուեստական արժէք մը չունի, ոչ ալ պատմագիտական տուեալներու վրայ կառուցուած է: Սակայն՝ անոր կարեւորութիւնը կը կայանայ սերունդի մը քստմնելի փորձառութիւնը հարազատօրէն ներկայացնելու մէջ: Կարելի է ըսել արցունքով եւ արիւնով գրուած հատոր մըն է, որ նոր սերունդին պիտի պատգամէ՝ չմոռնալ մեր նախնիներուն տառապանքը՝ յանուն ազգին եւ վերապրումի. չմոռնալ մեր չարչարակոծ անցեալը՝ ուժացման, ձուլման եւ օտարացման մեր երախտամոռ ժամանակներուն:

## ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

---


Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA  
\$ 125,00 (Air Mail) for Canada.  
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Email: -----



# ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿԵԱՆ. ԱԻԵՏԻՔ ԻՍԱՅԱԿԵԱՆԻ ՄԵԾ ՍԵՐԸ ԵՒ ՔՆԱՐԵՐԳՈՒԹԵԱՆ ԶԵՐՈՍՈՒՅԻՆ



### ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ

«Ախ, Շուշիկի համար էի ապրում... կրթում, սովորում, գրում, ձի հեծնում, տխրում, քեֆ անում, արտասահման թռչում՝ երազում էի միայն նրա համար...

Երբ ես դեռ պատանի, նոր աղջնակի սէրը իմ կրծքում արձագանգ տուեց, ես սիրեցի Շուշիկին, ես սիրեցի նրան, ինչպես իմ մայրիկին, ինչպես զեղեցիկ թիւնը, ինչպես Հայրենիքի կապույտ լեռները, իմ ողջ էությունը երգի ու երազի թեւերով հիւսիսներս սիրելի էություն հետ, ես երգեցի, մտորեցի ու լացեցի նրա համար, նրա համար միայն...

Լսեցի նրա մահը, հիմա կարող եմ ասել, որ իմ կէսը մեռել է»:

Ո՞վ եղած է իսահակեանին մեծ ու անկրկնելի սէրը, այդ ով էր, գոր իր ամբողջ կեանքի ընթացքին չկրցաւ մոռնալ ան: Որո՞ւ ուղղում էին անոր սիրառատ սողերը, որ այսօր կը գարդարեն հայ գրական ժառանգութիւնը: Ըստ որոշ վկայութիւններու՝ իսահակեանին կինը գիտէր ամուսնոյն անմոռանալի սիրոյ մասին, բայց անոր կողքին էր...

Շուշանիկ Մատակեան: Ահա այն կինը, որուն համար կը խելագարէր ու կը տանջուէր իսահակեան: Ան անսահման սիրած է այդ կինը, սակայն այդ գագաթը փոխադարձ չէր եւ կը տանջէր բանաստեղծը:

Իսահակեան իր սէրը որակած է որպէս հրէշային, ան յուսահատութեան գիրկը ինկած եւ նոյնիսկ անձնասպան ըլլալ մտածած է:

Ստորեւ կը ներկայացնենք Շուշանիկին գրած անոր նամակէն հատուած մը.

«Նորից վեր եմ առնում գրիչս, թաթախում եմ հիւանդ, արիւնտուած սրտիս մէջ եւ գրում եմ քեզ, Շուշիկ, մի քանի տող, գրում եմ ես՝ Աւետիք իսահակեանս:

Ինչո՞ւ եմ գրում, ի՞նչն է ստիպում ինձ գրել: Սիրել՛ ես քեզ չեմ սիրում, ատել՛ ես քեզ չեմ ատում, բայց իմ հոգում կաս՝ որպէս մի ծանր երազ, որպէս մի դժբախտութիւն, մի մղձաւանջ...

Ես ուզում եմ քեզ յօշոտել, ես ուզում եմ քեզ հազար-հազար անգամ սպաննել, սպաննել, նորից սպաննել, կենդանացնել՝ նորից սպաննել, յաւիտեան ապրել եւ քեզ յաւիտեան սպաննել, բայց, իհարկէ, չեմ կարող անել (անգոր եմ), ամբողջ էութիւնս բարի է... եւ որ ամենաողբալին է՝ ես դեռ քո ճիրաններում եմ. ի՞նչ անեմ, ինչպէ՞ս ազատուեմ. երբեմն քեզ ատում եմ ծովաչափ, եւ երբեմն սիրում եմ՝ պատրաստ ոտքերդ

համբուրելու, բայց երբ լիշու՞մ եմ անցեալը՝ մրրիկ եմ դառնում:

Դու մի՛ որոնիր այս տողերի մէջ որոշ միտք, որոշ իմաստ. ես գրում եմ համարեայ կիսախելագար, եւ մինչեւ մահս քեզ էլ ոչ մի տող գրելու չեմ եւ չեմ նայելու աչքերիդ:

Աստուած է վկայ՝ վերջին անգամ պիտի լամ քո առաջ եւ հայհոյեմ քեզ, հայհոյեմ քո բոլոր սրբութիւնները, որովհետեւ դու իմ սրբութիւնները պղծեցիր, որովհետեւ իմ ամենանուիրական սէրս շան պէս դուրս վռնտեցիր, որովհետեւ դու ինձ չարչարեցիր, նահատակեցիր՝ անսահմանօրէն:

Դու ասում էիր ինձ, որ ինձ չես սիրել՝ գիտեմ, լաւ գիտեմ, բայց այդ իրաւունք չէր տալիս քեզ, երբ ես քո ոտքերի տակ տիեզերական հօօր սիրուցս ստորացած ընկած էի, - ծաղրելու ինձ, արհամարհելու, դուրս չպրտելու. չէ՛ որ, Շուշան ջան, ես մարդ էի. չէ՛ որ, կային օրեր, որ դու ինձ գոնէ յարգում էիր, «թանկագին» եւ «ջան» խօսքերով խաղում էիր հետս... եւ այդ բոլորից յետոյ դու ինձ ոտաց տակ տուիր. խփեցիր ջահել սրտիս մէջ դաշիւններ ու չհանեցիր դրանք, թողիր սրտիս մէջ-մնացին, ժանգոտուեցին եւ արիւնովս իմ քայլափոխերս ծածկեցին, բայց դու մնացիր ինձ միշտ ծաղրող, միշտ անգութ, միշտ անսիրտ...

Այո, մենք յետոյ բարեկամացանք, գուցէ դու յետոյ ինձ սիրեցիր, բայց այդ օրուանից ես քեզ սկսեցի ատել եւ հայհոյել. դու յետոյ ինձ սիրում էիր ո՛չ մաքուր կերպով, այլ ֆիզիքապէս... Ես զգում եմ էի քեզից, բայց եւ անդիմադրելի կերպով սիրում էի. ախ, ամբողջ 13 տարի դու նստել ես ու բռնել իմ ողջ ուղեղը, հոգին եւ սրբապղծել իմ ողջ երկիրը...

Դու ինձ արնաքամ արիւր, գուցէ ակամայ, դու սպաննեցիր իմ տաղանդը, դու ինձ մղեցիր ամենածանր, դառն յուսահատութեան, երբ ես ամբողջապէս թաթախուած ինքնասպանութեան ծանր մտքերով, յանկարծ սթափուեցի:

Շուշիկ, ատելի, սիրելի Շուշիկ, ուրիշ կերպ ես չէի կարող վարուել, ես պիտի անպատուէի, վայր զգէի, որ կարողանայի ազատուել այդ հրէշային սիրուց, որ ինձ ծծեց...

Դու մի սոսկավիթխար վէրք բացիր հոգուս մէջ, եւ ո՛չ մի երկրային ու երկնային դեղով դա չի բժշկուի...

Այժմ, եթէ ինչ-որ հրաշքով դառնաս իմ կինը՝ ես իսկոյն կը փախչեմ քեզից, եթէ դառնաս հին

Շուշիկը՝ ես կը սպաննեմ ինձ՝ չտեսնելու համար տանջանքների այն ծանր շղթան, որ տարիներէ ի վեր ինձ կաշկանդեց:

Բայց լալիս եմ հիմա եւ սրտիցս արիւն է կաթում. գնա՛, Շուշիկ, Աստուած քեզ հետ, ապրի՛ր քո երեխաների համար. ինձ մի՛ անիծիր, անունս երբեք, երբե՛ք մի՛ յիշիր եւ ո՛չ մի տեղ, ոչ մի մարդու մօտ. աղաչում եմ քեզ. ինձ թողիր քեզ համար յաւիտեան...

Քո հոգու տաճարից թող ես լինեմ դուրս, ես՝ օտար, չճանաչուած Աստուած եմ այդտեղ:

Աղաչում եմ քեզ...

Ես էլ կը վարուեմ քեզ հետ այդպէս,

Դու ինձ համար մեռար, մեռար...

Արտասուելով համբուրում եմ քո գեղեցիկ մարմնը

Եւ նամբայ ընկնում

Նոր Աստուած գտնելու...

Քո՛ Աւետիք...

Հետաքրքրական դէպք մը Աւետիք Իսահակեանի կեանքին, կապուած իր միակ սիրոյ եւ կնոջ հետ...

Երկար տարիներ բացակայելէ ետք Աւետիք Իսահակեան այցի կ'երթայ հայրենի կիւմրի քաղաք: Օր մը կը հանդիպի սիրած աղջկան՝ Շուշանին, զոր շատոնց չէր տեսած: Կարօտակեց սիրահարները կ'որոշեն պտոյտի ելլել քաղաքէն դուրս:

Վարպետը կը դիմէ քաղաքի չայտնի կառապան Վեսիոլի (ուսուցիչն ուրախ) Վարդանին խնդրելով, որ գիրենք տանի

քաղաքէն դուրս շրջագայութեան: Վարդան սիրով կը համաձայնի եւ կառքը կը քշէ սարն ի վեր՝ դէպի Արագած լեռան փէշերը: Քաղաքէն դուրս ելլելու ատեն Վարպետը կառապանին ծածուկ կը հասկցնէ, որ մօտակայ բլուրները հասնելուն պէս, յարմար պահու մը այնպէս ընէ, իբր ձեռքէն մտրակը վար ինկաւ ու գիրենք առանձին ձգէ կառքին մէջ:

Վեսիոլի Վարդան կարծես ատոր կը սպասէր: Երբ կառքը կը սուրայ բլուրներուն քովէն եւ ճամբան խորդուբորդ էր, Վարդան կը բացազանչէ. «Վա՛յ Աւօ ջան, կը ներես, մտրակը ձեռքէս ինկաւ, իջնեմ փնտռեմ»:

Վարդան կ'իջնէ, երիտասարդ սիրահարները իրենք-գիրենք ազատ կը գգան ու կը հրճուին, կ'ուրախանան, իսկ Վեսիոլի Վարդան, երկար կը փնտռէ, բայց այդպէս ալ չի «գտներ մտրակը»...

Տարիներ ետք Իսահակեան դարձեալ թիֆլիսէն կ'երթայ հայրենի քաղաք, բայց այս անգամ արդէն տիկնոջ՝ Սոֆիկին հետ: Այնպէս կը պատահի, որ բանաստեղծը կ'որոշէ պտոյտի ելլել ծանօթ, բայց արդէն ծերացած կառապանին կառքով: Երբ քաղաքէն քիչ մը կը հեռանան, Վեսիոլի Վարդան կը չիչ տանամեակներ առաջ Աւոյին յանձնարարութիւնը եւ ետեւ դառնալով կ'ըսէ. «Հը՞, ի՞նչ կ'ըսես, Վարպետ, մտրակը ձգե՞մ»:

- Վարդան ջան, իզուր նեղութիւն մի՛ կրէ, կողքիս կ'ինս է, տխուր ժպտալով կը պատասխանէ Աւետիք Իսահակեան...

**FALAFEL ARAX**  
EST. 1980

**GLENDALE**  
(818) 696-2303  
625 E. Colorado Street, Glendale, CA 91205  
Monday - Saturday 10 am - 10 pm  
Sunday 11 am - 8 pm  
www.FalafelAraxUSA.com

**New Locations Coming Soon**

**We Now Deliver!**  
All of our famous dishes delivered to your home or workplace for lunch and dinner!

**feh 24**  
www.Fech24.com  
(818) 565-9231



### ՆԵՐԲՈՂ ԶԱՅՐԵՐԻՆ

#### ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Միջօրէ, արեւը մի ականթարթ կանգնի երկնակամարի կապոյտին, հեղեղային լոյսի գուարթութեամբ ժպտայ, իր ատրուշանից յառնած կրակ ճառագայթները որպէս հրավառութիւն փունջ-փունջ ցած նետի, հրաշագեղ ծիածան կապի մոլորակի մէջքին, լոյսավառ ողջոյն յղի մոլորակի հայրերին: Արեւ... արմէնները նրա քուրայում վառուող կրակը, լոյսը փառաբանեցին, հաւատացին, որ իրենց լեռների աշխարհի գմբէթ՝ Արարատի գագաթից էր յառնում, իրենց արտերի ցորեանի հասկերին ոսկէ լոյս շաղում, իրենց այգիներին պտղաբերութեան ծիածանի լոյս փուռում, իրենց սրտերին կեանքի հէքիաթ վարում: Միհր կոչեցին նրան, մեհեաններ պատեցին նրա փառքին, որոնց ճակատներին յաւերժութեան խորհրդանիշ կարմիր բոցոտ նուռեր, նրա կրակից հրդեհուած խաղողի ողկոյզներ քանդակեցին, նրանց շուրջը լոյսով բոցավառ նուննիներ տնկեցին: Նրա ճառագայթների փունջերից կրակ վառեցին ատրուշաններում, Արմա-Արմին՝ արեւ աստուծոյ որդիներ կոչեցին իրենց: Եթէ մայրերի օրուան ձօնուած տօնախմբութեանը նրանց լանջերը տիեզերքից քաղած աստղերի փունջերով քոչեցին, թնդանթնների որոտների համագարկերով ողջոյնն հայրերին, արեւուրդի արմինների սրտերից հոսած գուարթ լոյսի տօնախմբութիւն թող լինի այսօր: Ամերիկան ցնծում է այսօր, թող ցնծայ աշխարհն այսօր, սրտառատ ժպիտների համբոյրներ հայրերի խոհուն ճակատներին, երախտագիտութեան սեղատարափ անձրեւ, երջանիկ օրերի մաղթանքի աղօթք նրանց սրտերին:

Տարին էր 1909, ամերիկոսի Սոնորա Սմարթ Տոտը քաղաքի տաճարում ունկնդրել էր մայրերի օրուայ տօնակատարութեան ողջոյնի քարոզը: Թախծոտ աղօթել էր, որ յաւերժութեան ճամբաներով քայլող մայրիկի հոգուն արարիչը լոյս շողար: Մայրիկի կորստեան ցաւի մղձաւանջն էր պատել հոգին, մայրական գգուանք չէր ծորել սրտին, մայրական տիեզերական սիրոյ շողեր չէին իջել դէմքին, չէր հպել մօր լանջին, որ նրա սրտի տրոփիւնի գարկերը մայրութեան սիրոյ լոյս վառէին իր հոգու տաճարում: Մայրը, իրեն կեանքի արեւի լոյս պարգեւելու պահին... լոյսն էր հանգել: Տաճարում հնչած աղօթքների հոգեշարժ հնչիւնները, մայրերին ձօնուած անանձնական սիրոյ ողջոյնները՝ պլպլացող մոմերի լոյսին յենած, գնում էին գգուելու յաւերժութեան ճամբաներով քայլող մայրերին: Սոնորան ընկողմանել էր մայրական վշտի անուրջներին, խորհրդածել՝ ինչու՞ նաեւ հայրերին երջանիկ մաղթանքների, խոնջանքի երախտիքի, նրանց արարման խրախճանքի հանդէսների տօնախմբութիւն չլինէր, նրանց աւիւնով ուռնացած գաւակները իրենց հոգիներից քաղած սիրոյ երախտիքի փունջեր չմատուցէին:

Սոնորան եւ իր հինգ քոյր ու եղբայրները, Վիւլեամ ձէքսոն Սմարթ հայրիկի խնամքին էին մնացել: Կեանքի վայելքները զոհաբերած՝ բարեպաշտ, բրիտանական սիրով յորոճ հայրը, աւելի քան երկու տասնամեակներ խնամել էր իր վեց գաւակներին, մայր-

րական սիրոյ գուրգուրանքի հուր կաթել նրանց սրտերին:

Սոնորան, 1910 թուականի Յունիսի 19-ին, հայրիկի ծննդեան օրը, վաշինգտոն նահանգի Սպակէյն քաղաքում, իր եւ բոլոր հայրերի մեծարման համար տօնախմբութիւն էր կազմակերպել: Աստուածային երախտագիտութեամբ յորդած աղջիկ, քու անունն էլ փառաբանում է հայրերի մեծարման օրուայ հետ: Եւ դու, հայրական ջերմ սիրոյ կրակի ջահը ձեռքիդ քայլում ես աստղերի լոյսով վարար քու յաւերժութեան ճանապարհին, հայրերի հոգիները քեզ գրկած տանում են իրենց տիեզերական ճախրանքի ճամբաներով:

Եւ ամէն տարի, արարիչի հանգստեան այդ Կիրակի օրը, երկրում սկսել էին հայրերի մեծարանքի ոչ պաշտօնական տօնախմբութիւններ, նրանց պատուին սիրոյ հրավառութիւններ կատարել, նրանց արի սրտերը ցնծութեան լոյսով հեղեղել: 1924 թուական, երկրի նախագահ՝ Կալվին Կուլիջը, ամէն տարուայ Յունիս ամսուայ երրորդ Կիրակի օրը հռչակել է՝ «Հայրերի Օր»: Օրուայ ծաղիկը ընտրել է՝ Աստղիկ դիցուհու արիւնից շառագունած ծաղիկների գեղուհի վարդը, որի վրայ յենած սոխակները տիեզերքի ողջոյնն են հնչում աշխարհին: Կարմիր վարդերը՝ կեանքի հէքիաթի վայելքով հրճուող հայրերին, սպիտակները նրանց շիրմներին՝ որպէս լուսնեակից քաղած ձիւնալոյս պսակ:

Տիեզերքի արարիչին «Հայր Մեր» ենք կանչում: «Հայր Մեր» սէրունական աղօթքն ենք մրմնջում վերացած ու լուռ երկիւղածութեամբ: Խաղաղութեան անդորր է իջնում մեր հոգիներին, շարից փրկուելու աղերսանք, մեր անուշ մանչերին՝ հանապազօրը հացի պարգեւի յոյսի ըղձանք, հայրենի երկրին խաղաղութիւն: Հայրը հացի արարողն է, մեր ունչպար հայրերն են ցորեանի հատիկները թեւատարած շող տուել արտերի հողի երեսին, հոռովելներ կանչելով եզները հետ եղբայրացել, արօրների արեւաշող խոփերով հողի կուրծքը պատուել, նրանով ծածկել ցորեանի ոսկեհատիկները, որոնք իրենց մահով արտերին կանաչ են փուռում, իրենց ոսկեփայլ ծփանքով լոյս վառում, ոսկեհուր հասկերը գեփիւռին յենած պար բռնում, ամբարները յորդում հանցով: Հայոց նախնիների աստուածների տիեզերական ոգու խորհուրդի կրակը հոգում՝ բանաստեղծ վարուժանը, հացի արարման պատարագն է երկնել:

Արմինների Արմինա-Հայաստանը՝ հայրենիք ենք կոչել, նախնիների արեամբ, քրտինքով, խոնջենքով, քաջերին վայել մարտիկների արիւնով ողողուած հողը՝ հայրենի հող անուանել, Արշակների սրտերին պայքարի, կուռի շանթեր է փոթորկել: Հայրենի հողում, հայրերը շէներ, ոստաններ են արարել յետնորդների համար, այդ նրանք են դիւցածնորէն կուռել նրանց պաշտպանութեան համար: Հայրենիք ենք կանչում... սարսուռում են մեր հոգիները, ալիքում են մեր սրտերի կարմիր ծովակները, կորցրած երկրի կարօտի յուշերից նուաղում է մեր հոգիների տաճարների լոյսը, նրա խոռովքից մեր ակներբից հոսած արցունքի մարգարտաշար հատիկներն են համ-

բոյրում մեր այտերը: Հայրենիքի համար իրենց գարնանային կեանքի երազներն են գոհել բազումբազում արեւ որդիներ, իրենց արի ցեղի արեամբ սրբացրել հողն հայրենի:

Հայրերի արարած օճախները հայրական տուն ենք կոչել, ուր գնացինք նրա կարօտի մրմունջները գնացին մեզ հետ: Իմ, ձեր ծննդավայրերի հայրենի տները, մեր հոգիների տաճարներն են: Ամէն օր այցի եմ գնում նրան, տիրականներս մտնում լայն դարպասից, նայում որթատունկի «Թարմա»-ից կախուած արեւոտ ողկոյզներին, բակի նուննի-ից հայոց տաճարների զանգերի նման պայթած նուռերին, քարէ աստիճաններով յուշիկ բարձրանում պատշգամբ, հայրենի հողի կուռից վերադարձած կամաւորական կապորալ Արմենակ հայրս իր լեռնական լանջին սեղմում ինձ, մայրիկիս տաք համբույրը ճակատիս... երանգ, չքնաղ երանգ, գէնքով եօրբ պիտի վերադառնանք հայրենի տներ: Հոգիս խռովում է կարօտի սարսուռի անուրջներով, հայրենի լեռների անուշ հովիկների թեւերին բազմած՝ գնում ընկողմանում հայրենի արտերի ցորեանի ծովիկներին: Հայրը ինքը տունն է, իր վսեմ ճակատի վրայ է պահում այն, որ չփլի, շարունակի ապաստան լինել գաւակներին:

Մահակ Բագրատունի իմաստուն մեծ իշխան, իր արիական ազգի պատմութիւնը երկնելու համար աղերսել էր Մաշտոցի աշակերտ Մովսէս Խորենացուն, որ իր տոհմին ու արի այրեանց ցեղին յաւերժացնելու համար մատեան երկնէր: Եւ Խորենացի իմաստուն այրը, իր ցեղի արարումներին որոնելու ելաւ, Արմին-հայրերի մտքի թռիչքներով աւանդուած պատմամերից ճշմարտութիւնը իրականը պեղեց, իր ազգի բազինին «Հայոց Պատմութիւն» մատեանը ձօնեց, որից բռնկած ջահերը արիական հուր են կաթում Արմին-հայրերի հոգիներին: Արմինա-Հայաստան աշխարհի թագաւորութիւնը վերընձիւղելու տենչով աւլցուն սիւնիաց աշխարհի արիասիրտ վասակ Նահապետի Գողթն աշխարհի բանաստեղծների տաղերը ճառագեց մեր սրտերին, հուր-հերով ու արեգակունք-աչքերով վահագնի ծնունդի հրաշապատումը աւետեց, նախնեաց մեծ գործերի հպարտանքը ու իրենց արի ցեղի վսեմութեան պատգամ փայլատակեց մեր սրտերին: Եւ նրան «Պամահայր» կոչեցինք:

Սպիտակ թղթին հակած, մտքիս դողանջում է անուշ թոռնիկներիս կանչերի արձագանգը, երբ նրանք բակում խաղալիս ինչպէ՞ս էին «Մեծ Հայրիկ» կանչում եւ գիտէ՞ք այն ինչքան քաղցր էր հնչում: Նրանց խաղընկերները զարմացած նայում էին թէ, ինչու՞ էին պապիկին «Մեծ Հայրիկ» կանչում: Եւ «հայրիկներ» սիրոյ ջերմութեամբ լեցուն այդ մանչերն էլ, ինձ հանդիպելու ատեն գուարթ ձայնով «Մեծ Հայրիկ» էին կանչում:

Տիեզերական բարութեան ջահը ձեռքին երկիր մոլորակ ժամանած բարի հսկան՝ Սարոյեանը, ասել էր, որ բոլոր հայերը բանաստեղծ են: Ճշմարիտ էր այդ իմաստունը, իսկապէս Արմին-հայրերի դպրութեան, արուեստների, բանաստեղծների հովանաւոր՝ Տիր

աստուածը, ինչքա՞ն քերթողներ, գուսաններ էր պարգեւել իր Արմէն-Հայ արի մարդկանց ցեղին: Գուսաններ՝ Սայեաթ, Զիւանի, Շեւրամ, Հաւասի, Աշոտ, Շահեն, Գոստի իրենց երգերով փառաբանել են հայրերին, պատգամել՝ գաւակներին հովանի լինելու համար երկնից քաղած սպիտակ ամպերով քոչել նրանց: Յեղին սրտի ջահը ձեռքին՝ «Վահագն Յարդապողի ձանապարհի» Արմին-Հայ աստուածների տաճարից հայրենի երկիր եկած վարուժանը, աղաչել էր հայրիկին՝ իր ձիւնոտ վարսերի խորհուրդով, մտքի անդաստանից յորդած աղօթքով օրհնէր իրեն:

Հայր իմ, օրհնէ, ժամը հասաւ, պիտ երթամ, նոր կեանք մ'իմծի կը սպասէ: Պատանութիւնն ես բոյեցի, նոր արիւն Երակիս մէջ կը վազէ: Իմ արիւնս է գոյացած քու քրտինքով:

Յոգմութեանդ ծիւցն եմ տխուր: Հոգիդ, կաղնի, երբ կործնող կ'ուտար մրրիկիկիմ՝ Ես շուփիմ տակ, հանգիստ, լուռ:

Հայր իմ, օրհնէ, դողող ձեռքերդ գլխուս դիր, Թող մատներդ կաթի վար Աղօթի՞ն եկած հոգուդ պայծառ խորանցնէ: Վերջին ժամն է, օրհնէ հայր: Հայ իմաստուն մի այր, իր մայրիկին աշխարհներ տարաւ՝ «Մայրիկ» շարժանկարով: Տեսե՞լ էք արդեօք, Արմին Հայ մի ուրիշ իմաստունի՞ «Հայրիկ» շարժանկարը: Պատասաւ վրայ պարթեւահասակ խոշոր Մհեր-Ֆրունզիկ «Հայրիկ»-ն է քայլում եւ հեռու բազմութեան մէջէն իր մանչն է վազում: «Հայրիկ» կանչելով գիրկն ընկում: Ինչքա՞ն անհամբեր սպասել ենք հայրական տան սեմին, վազել հայրիկին ընդառաջ, խոնջած հայրը սիրոյ թովչանքի քրքրով գրկել, սեղմել են մեզ իրենց լանջերին: Չէ, մեր հայրերը մեր ցեղի ոգին են:

Մեր լեռները կոչեցինք՝ «Լեռներ Հայրենի»: Բարձր են լեռները Արմինա-Հայաստան երկրի, սպիտակ թագեր են նրանց գագաթներին, ամպերի ձերմակ շապիկներ են հագել: Գիշերները աստղերն են այցի գալիս նրանց, լուսնեակն է իջնում իր սպիտակ համբույրը շողելու ճակատներին, արեւն իր երթը աւարտելուց առաջ կարմիր պատմուճան փուռում նրանց երեսներին, երկնքում պայթած շանթերը կրակէ գոտի կապում մէջքերին, նրանց սրտերից կրակ է ժայթքում:

Ո՞վ Արմին-Հայ մարդ, որ արեւի լոյսի ու կեանքի հէքիաթն ես ըմբոշխնում, իմացի՞ր, այն քեզ է պարգեւել հայրդ, խոնարհիւր նրա սպիտակ թագին, նրա կեանքի իմաստութեանը եւ դու քրիստոնեայ Հայ, կատարի՞ր պատուիրանը քու պաշտած Աստուծոյ՝

**ՅԱՐԳԻՐ ՈՒ ՊԱՏՈՒԻՐ ԾՆՈՂՔԻ**

«ՊԱՏՈՒԻ ԲՈՒ ՀԱՅՐԻ ՈՒ ՄԱՅՐԻ, ՈՐՊԵՍՁԻ ԲՈՒ ՕՐԵՐԻ ԵՐԿՐԻ ԸԼԼԱՆ ԱՅՆ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ՈՐ ԲՈՒ ՏԵՐ ԱՍՏՈՒԱԾԻ ԿՈՒՏԱՅ ԲԵՁԻ» (Ելից 20-12) Եւ ամենաթանկագին օրինակը, որ հայրը կարող է տալ իր գաւակներին, նրանց մայրերին շնորհուած իր սիրոյ գուրգուրանք է:

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)  
Updated every Friday



### ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏԸ ԸՆՏԱՆՔԻՆ ՄԵՋ

Հոգեբանական մթնոլորտը ընտանիքին մէջ իշխող տրամադրութիւններու, զգացումներու ամբողջութիւնն է: Հոգեբանական մթնոլորտը կ'որոշէ ընտանիքի անդամներուն միջեւ յարաբերութիւններու որակը:

Եւ կախեալ այն բանէն, թէ ինչպիսի տրամադրութիւններ ու զգացումներ կը գերիշխեն, մթնոլորտը կրնայ ըլլալ ինչպէս ուրախ ու ջերմ, այնպէս ալ բացասական, քանդիչ: Դրական հոգեբանական մթնոլորտի յառաջացման համար նախադրեալները կը ձեւաւորուին, երբ ամուսնական դաշինք կը կնքեն մարդիկ, որոնք ունին նման բնաւորութիւններ, միեւնոյն արժէքաչին համակարգ եւ կենսական առաջնահերթութիւններ, ընդհանուր նպատակներ: Եւ այդ պարագային ամուսինները համատեղ կեանքի ընթացքին կը զարգանան միանման, անոնց կեանքը կը դասաւորուի հարթ եւ բարեկեցիկ:

Իրադարձութիւններու նման բարենպաստ ընթացքը կրնայ խափանել հիւանդութիւնը կամ այլ անկանխատեսելի հետեւանքները: Սակայն սովորաբար այն մարդիկ, որոնք կ'ապրին սիրոյ եւ փոխընդունման մէջ, դժուար պահերուն եւս կը սատարեն իրարու եւ համատեղ կը յաղթահարեն յառաջացած խնդիրները:

Ընտանիքի մէջ ինչպէ՞ս կը դրսեւորուի դրական հոգեբանական մթնոլորտը: Սովորաբար այն ընտանիքը, ուր կը տիրէ դրական հոգեբանական մթնոլորտը, դիւրին է որոշել ըստ անոր անդամներու դրսեւորած վարքին: Այդ մարդիկ շատ կը շփուին իրարու հետ, անոնք կը կիսեն անցած օրուան տպաւորութիւնները, տեսած իրադարձութիւնները, գալիք օրուան կամ ամսուան ծրագիրները:

Այդպիսի մարդիկ կը ձգտին իրարու հետ անցնել իրենց ազատ ժամանակը, միասին կ'ըլլան ոչ միայն տան մէջ, այլեւ հիւր երթալու ընթացքին կամ տարբեր ձեռնարկներու ժամանակ: Իբրեւ կանոն, անոնք լաւ յարաբերութիւններ կը պահպանեն իրենց ամուսինին ազգականներուն եւ ընկերներուն հետ: Այդպիսի ընտանիքներու մէջ ամուսինները հոգ կը տանին մէկը միւսին, կ'աշխատին ուրախացնել զիրար: Զգտելով պահպանել դրական հոգեբանական մթնոլորտ, ամուսինները ոչ թէ կը հակաձառեն զիրար, վախեր կամ նեղացկոտութիւն կը դրսեւորեն, այլ՝ ուշադրութիւն, հոգատարութիւն եւ երախտիք:

Բացասական հոգեբանական մթնոլորտը եւ անոր հետեւանքները. Բացասական հոգեբանական մթնոլորտ կրնայ ձեւաւորուիլ անգամ այն ընտանիքին մէջ, որ դուրսէն բարեկեցիկ կ'երեւի: Այդպիսի ընտանիքի մէջ իւրաքանչիւրը կ'ապրի իր կեանքով, չկայ լիարժէք շփում եւ հոգեկան միասնութիւն: Այդպիսի իրավիճակ կը ձեւաւորուի, երբ մարդիկ անհամատեղելի են իրարու հետ՝ կապուած տարբեր դաստիարակութեամբ, հասարակական կարգավիճակով, արժէքներով եւ համոզումներով, ինչպէս նաեւ՝ ընդհանուր նպատակներ չունենալով: Բացասական հոգեբանական մթնոլորտը վատ հետեւանք կ'ունենայ ընտանիքի իւրաքանչիւր անդամի զգացմունքային իրավիճակին վրայ, սակայն ամենաշատը կը տուժեն փոքրիկները: Փոքրիկը պէտք է մեծնայ լիակատար համաձայնութեան եւ փոխընդունման, յարգանքի ու հոգատարութեան մթնոլորտի մէջ. միայն այդ պարագային ան կը մեծնայ իբրեւ հոգեբանօրէն առողջ եւ երջանիկ մարդ:

### ԻՆՉՊԷՍ ԽՈՒՍԱՓԻԼ ՄԱԶԱԹԱՓՈՒԹԵՆԷՆ ԵՒ ԴԱՆԴԱՂԵՑՆԵԼ ՄԱԶԵՐՈՒՆ ԵՐՄԿԻԼԸ

Մագաթափութիւնը, ճերմակ կամ անփայլ մագերը՝ համապատասխան հանքանիւթերու, սպիտակուցներու եւ վիթամիններու պակասի արդիւնք է: Մասնագէտներու կարծիքով՝ ասոնցմէ խուսափելու լաւագոյն տարբերակը ճիշդ սննդականոնն է:

Եթէ որոշած էք բուժել մագերը ու կանխարգիլել անոնց ճերմակիլն ու մագաթափութիւնը պէտք է սկսիլ արեան քննութեանն ու սննդականոնի հետազօտութեանն:

Ըստ մասնագէտներու՝ մագերը գրեթէ 90 տոկոսով կազմուած են սպիտակուցներէ: Այդ պատճառով օրուան սննդականոնին մէջ պէտք է պարտադիր ընդգրկուած ըլլան բաւարար քանակով սպիտակուցներ:

Ինչպէ՞ս խուսափիլ մագերու ճերմակիլն

Մագերու ճերմակիլը կարելի է կանխել ընկողջ ուտելով: Անիկ կը պարունակէ մեծ քանակութեամբ պիտիին, վիթամին E եւ օմեկաճարպեր: Ընկողջը նաեւ կը պարունակէ պղինձ, մեկանիւն: Մասնագէտը կը նշէ, որ պղինձի պակասն է, որ կը յանգեցնէ մագերու ճերմակիլուն: Մագաթափութեան պատճառները բարակ մագերն ու մագարմատներու տկարութիւնը կրնայ կապուած ըլլալ երկաթի պակասի հետ: Թէեւ ասոր համար կան բազմաթիւ այլ գործօններ եւս, ինչպէս օրինակ ճնշխտը կամ մթնոլորտի աղտոտութիւնը: Սակայն, անոնց ազդեցութիւնը այդքան զգալի չ'ըլլար, եթէ չ'ըլլայ երկաթի պակաս:

Մագաթափութեանն խուսափելու համար պէտք է ուտել երկաթ պարունակող ուտելիքներ՝ կարմիր միս, հնդկաձառար, ինձոր: Հաւկիթը օգտակար է մագերուն ոչ միայն ուտելիքի տեսքով, այլ նաեւ մագերու համար ամրացնող դիմակի: Անիկ կը պարունակէ սպիտակուցներ, քերթիին, վիթամին D եւ B, պիտիին, որոնք կ'ամրացնեն մագերը եւ զանոնք կը դարձնեն

աւելի առաձգական:

Նուազ կարեւոր է նաեւ մագերու ճիշդ ինամքը, որ առանձնապէս սննդականոն չի պահանջուող, ընդամենը բազմազան ու առողջ սննդականոն, որուն համար, պէտք է վերանայիլ ուտելիքներուն ցանկը: Նոյն սննդականոնները տարբեր կերպով կ'ազդեն մարդոց վրայ:

Սննդականոնը, որ կը համապատասխանէ մէկուն, կրնայ օգուտ չի տալ ուրիշին: Սննդականոնի մասնագէտներ պարզած են, թէ ինչն է ատոր պատճառը: Հետազօտութեան համաձայն, մարդիկ, իրենց աղիքային համակարգէն կախեալ, ուտելիքը կը մարսեն տարբեր կերպով: Այն ուտելիքները, որոնք չեն ազդեր մէկուն արեան մէջ շաքարի մակարդակին վրայ, կրնան ուրիշի մը արեան մէջ կլիւքոզի մակարդակի կտրուկ աճի յանգեցնել: Ասիկա իմանալով՝ սննդականոնի մասնագէտները նկատելի յառաջընթաց արձանագրած են իւրաքանչիւրի համար ճիշդ սննդականոն մշակելու հարցով: Հետազօտութեան մասնակցած են տարբեր կշիռք ունեցող 800 մարդ: Փորձարկողներուն առաջարկուած է միատեսակ ուտելիք, որպէսզի հետեւին, թէ անոնցմէ իւրաքանչիւրի մարմինը ինչպէս կ'արձագանգէ նոյն ուտելիքին: Մասնակիցները իրենց մօտ պիտի նշեն, թէ իրենց ամէնօրեայ կեանքին մէջ ինչ ուտելիք կ'ուտեն:

Նշանակալի է, որ ամբողջ կեանքի ընթացքին աւելորդ կշիռքի դէմ պայքարող կնոջ մը մօտ կանոնաւոր կերպով լոլիկ ուտելու պատճառով կտրուկ բարձրացած էր արեան մէջ շաքարի մակարդակը: Ասիկա զարմանալի է, որովհետեւ լոլիկը, իբրեւ կանոն, կը պատկանի այն մթերքներու շարքին, որոնք չեն ազդեր արեան մէջ կլիւքոզի պարունակութեան: Իրականացած փորձարկումը ապացուցած է, որ նոյն ուտելիքները չեն կրնար նոյն օգտակարութիւնը ունենալ:

### ԺՊՏԱԼՈՒ ԵՕԹԸ ՊԱՏՃԱՌ

տերեւը եւ անիկա ձեզի լաւ երազներ պիտի բերէ:

-Դափնիի բոյրը կը փրկէ յոգնածութեանն եւ լրացուցիչ ուժ կու տայ:

-Եթէ դափնիի տերեւը խաչաձեւ դնէք տան մուտքի գորգին տակ, անիկա յաջողութիւն կը բերէ: Ամիսը մէկ անգամ փոխեցէք տերեւները:

-Որպէսզի նորապսակները երջանիկ ընտանիք ունենան, հարսանիքի նախօրէին ամբողջ գիշերը փեսային եւ հարսին կօշիկներուն մէջ դափնիի մէկական տերեւ դրէք, իսկ առաւօտեան հանեցէք զանոնք եւ շնորհակալութիւն յայտնեցէք:

-Մուտքի դրան վրայ ամրացուցէք կարմիր թելով իրարու կապուած դափնիի 5 տերեւ, եւ անոնց, որոնք կ'ապրին այդ տան մէջ, միշտ կ'ուղեկցի յաջողութիւնը իւրաքանչիւր գործի մէջ:

-Դափնիի ճիւղը՝ դրուած փոքրիկի մահակալին վրայ՝ կը պահպանէ վատ աչքէն:

-Գումար հրապուրելու ծէս. վերցուցէք դափնիի 1 տերեւ, անոր վրայ նարինջի իւղ կաթեցուցէք եւ դրէք այնտեղ, ուր սովորաբար կը պահէք ձեր տան գումարը:

-Եթէ դափնիի չորացած տերեւներով շրջապատէք յղի կնոջ մահակալը, անիկա էականօրէն կը հանգստացնէ ցաւերը ծննդաբերութեան ժամանակ:

Ժպիտը կ'աշխուժացնէ ուղեղի որոշ գործընթացներ, որոնք դրական ազդեցութիւն կ'ունենան մարդու վրայ: Եօթը պատճառաւելի յաճախ ժպտալու համար:

1. Ժպիտը երջանկութիւն կը պարգեւէ. Ժպիտը ազդանշան կ'ուղարկէ ուղեղին, որ դուք երջանիկ էք, իսկ երբ դուք երջանիկ էք, մարմնին մէջ կ'արտադրուի մեծ քանակութեամբ էնտորֆին հորմոնը, եւ ասոր իբրեւ արդիւնք կը բարձրանայ ձեր տրամադրութիւնը:

2. Ժպիտը երջանկութիւն կը պարգեւէ ձեզ շրջապատող մարդոց. Ժպիտը վարակիչ է: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ երբ մարդը կը տեսնէ իր ժպտացող ընկերը, ինքնաբերաբար կը սկսի ժպտալ եւ անոր տրամադրութիւնը նոյնպէս կը բարձրանայ:

3. Ժպիտը աւելի գրաւիչ կը դարձնէ ձեզ: Ժպտացող մարդիկ աւելի գրաւիչ կը թուին հակառակ սեռի ներկայացուցիչներուն համար: Ասիկա բնական երեւոյթ է, քանի որ դիմացինը կ'ուզէ իմանալ, թէ ով էք դուք եւ ինչու կը ժպտաք: Ժպիտը աւելի գրաւիչ կը դարձնէ ձեզ, ուրեմն երբ հանդիպման կ'երթաք, մի մոռնաք ժպտալու մասին:

4. Ժպիտը կ'օգնէ ազատելու

ճնշախտէն, յոգնածութեանն, տազնապի զգացումէն եւ լարուածութեանն: Երբ մենք կը ժպտանք, մեր երջանկութեան ազդակները «կը ստիպեն» ազատելու ճնշախտէն, որ դրականօրէն կ'ազդէ մարդու առողջութեան ընդհանուր վիճակին վրայ:

5. Ժպիտը աւելի գրաւիչ է, քան դիմադարձութիւնը. Մարդոց 69%-ը կը կարծէ, որ ժպտացող կինը աւելի գեղեցիկ է, քան շարունակած ու դիմադարձութեան կինը: Ժպտալու ընթացքին կնոջ դէմքի մկանները կը քաշեն անոր մորթը եւ աւելի երիտասարդ տեսք կու տան անոր:

6. Ժպիտը դրականօրէն կ'ազդէ մարդու առողջութեան վրայ:

Ժպիտը դրականօրէն կ'ազդէ մարդու դիմադրողական համակարգին վրայ: Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ ծիծաղը կ'աչրէ ճարպերը, կը նպաստէ արեան շրջանառութեան, կը նուազեցնէ արեան մէջ շաքարի մակարդակը, կը կարգաւորէ քունը:

7. Ժպիտը յաջողակ կը դարձնէ ձեզ. Ժպտալէ մարդիկ աւելի ինքնավստահ կը թուին: Գործնական հանդիպումներու ժամանակ պէտք է ժպտալ, քանի որ այդպէս դուք աւելի պատուարժան, վճռական եւ ինքնուրոյն մարդու տպաւորութիւն կը ձգէք:

### ՕԳՏԱԳՈՐԾԵՑԷՔ ԴԱՓՆԻ ՏԵՐԵՒ

### ՑԱՆԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՅԱՄԱՐ

Դափնին մաքրութեան, նպատակասլացութեան, յաղթանակի եւ անմահութեան խորհրդանիշն է: Անիկա կու տայ կենսական ուժ, յաջողութիւն եւ ցանկութիւններու իրականացում:

Հին հռոմէացիները եւ չոյնները դափնիին կը վերագրէին կախարդական յատկութիւններ, կ'օգտագործէին զայն իրենց ծէսերուն մէջ եւ կը հաւատային, որ դափնիի տերեւը կը բերէ յաղթանակ, երջանկութիւն եւ յաջողութիւն:

Փորձեցէք դուք ալ դափնիի տերեւի օգնութեամբ դէպի ձեզ հրապուրել երջանկութիւնը:

-Գրեցէք ցանկութիւն դափնիի տերեւի վրայ, յետոյ նետեցէք զայն կրակի մէջ, եւ այն ամէնը, որ մտածած էք ժամանակի ընթացքին, կը կատարուի:

-Սենեակի բոլոր անկիւնները, ուր աւելի յաճախ կ'ըլլան ձեր հարազատները, մէկական դափնիի տերեւ դրէք, եւ անիկա կը հեռացնէ հիւանդութիւնը ձեր տունէն:

-Եթէ միշտ ձեր մօտ դափնիի տերեւ ունենաք, անիկա կը պահպանէ տահաճութիւններէն եւ դժբախտ դէպքերէն:

-Եթէ կ'ուզէք, որ դրական փոփոխութիւններ տեղի ունենան, ուստի ձեռքով փրցուցէք դափնիի տերեւը, շնչեցէք անոր բոյրը եւ բարձրաձայնեցէք ձեր ցանկութիւնները:

-Բարձի տակ դրէք դափնիի



### ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ** Մարտ 21-Ապրիլ 19  
 Երբեք նկատի չես առած թե կեցուածքդ ինչ պիտի ըլլայ երբ սիրելիի մը հետ վեճի բռնուիս: Երբ եւ բարեբեր շաբաթ մը պիտի ունենաս: Սիրելիիդ կամքը կատարելու համար մեծ ջանք կը թափես: Աքանջելի ծրագիր մի պիտի յաջողի:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,11,22,25,30

**ՅՈՒԼ** Ապրիլ 20-Մայիս 20  
 Հոգեկան անհանգստութեանդ պատճառը կրնայ գործիդ նեղութիւններուն հետեւանքը ըլլալ: Ուրիշի խօսքերուն հետեւելով առած որոշումներդ մի անտեսեր: Պարտքերդ վճարելու մի ծուլանար որպէսզի անոնք չշատնան:  
 Բախտաւոր թիւերդ են: 1,14,15,28,33

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** Մայիս 21-Յունիս 20  
 Հետաքրքրական եւ կարելոր ծրագիր մը ունիս կեանքիդ համար, սակայն շատ կը վարանիս անոր յաջողութենէն: Բոլոր քմայքներդ չես կրնար իրականացնել շուտով: Գործատիրոջդ հետ զգուշացիր յարձակողական կերպով վարուելէ:  
 Բախտաւոր թիւերդ են: 8,10,16,21,29

**ԽԵՅՉԵՏԻՆ** Յունիս 21-Յուլիս 22  
 Երբեմն պատասխաններդ յարձակողական եւ կոշտ բնոյթ կ'ունենան, քիչ մը աւելի մեղմ եղիր: Բարեկամներուդ օգտակար ըլլալով՝ մեծ գոհունակութիւն պիտի ստանաս: Տանդ գործերուն աւելի ժամանակ տրամադրելու ես:  
 Բախտաւոր թիւերդ են: 15,20,24,31,35

**ԱՌԻԲԾ** Յուլիս 23-Օգոստոս 22  
 Մեծ ու աչքառու գործեր կատարել շատ կը սիրես որպէսզի տեսնուիս: Կողակիցդ երբեք անկատ ձգելու չես որ չնեղանայ: Գործատեղիիդ մէջ մեծ պատրաստակամութիւն ունիս ազատ կամքով չ'ակնկալուածը կատարելու:  
 Բախտաւոր թիւերդ են: 4,19,28,31,33

**ԿՈՅՍ** Օգոստոս 23-Սեպտեմբեր 22  
 Մէկու մը հանդէպ անարդար եղած ես եւ հիմա կ'ուզես հատուցում կատարել անոր: Զգացումներդ պահելու շատ զգոյշ ես եւ տկարութիւնդ չես արտայայտեր: Երկար ճամբորդութիւն մը կը ծրագրես, սակայն կը խուսափիս ծախսէն:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,9,22,30,34

**ԿՇԻՈՔ** Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22  
 Ակամայ թերացած ես պարտականութիւն մը կատարելու եւ հիմա յանցաւոր կը զգաս, երբեք դուն քեզ մի նեղեր այդ հարցով, օրը կ'ուզայ եւ կը կատարես: Գործիդ մէջ մեծ յաջողութիւններ պիտի գտնես եւ եկամտող պիտի կրկնապատկես:  
 Բախտաւոր թիւերդ են: 3,18,23,34,35

**ԿԱՐԻՃ** Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21  
 Զգացումներդ պահել կ'ուզես, սակայն չես յաջողիր: Որքան որ ալ ջանք թափես սիրելու գործընկերդ՝ պիտի չկրնաս ամբողջութեամբ համակրիլ անոր: Անձնասիրութեամբ մի վարուիր ընտանիքիդ անդամներուդ հետ:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,13,24,25,31

**ԱՂԵՂՆԱԲՈՐ** Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 21  
 Կը փորձես բարձր չափանիշով կեանք մը ապրիլ, սակայն դժուարութիւններու եւ արգելքներու կը հանդիպիս: Արգելքներ կան որ կը ստիպեն քեզ հեռանալու որոշ շրջանակէ մը որ քեզի համար շատ սիրելի եւ յարգելի է:  
 Բախտաւոր թիւերդ են: 17,20,26,31,33

**ԱՅԾԵՂՋԻՐ** Դեկտեմբեր 22-Յունուար 19  
 Լաւ բարեկամ մը կը փնտռես որու հետ հաւատարիմ եւ յաջող գործ մը ձեռնարկես: Թռչուններու ճռուողունները քեզ կը հմայեն եւ տրամադրութիւնդ կը բարձրացնեն: Ընտանիքդ պիտի մեծնայ շուտով:  
 Ծաբաթավերջը շատ հաճելի պիտի ըլլայ:  
 Բախտաւոր թիւերդ են: 6,17,22,31,32

**ԾՈՎԱՆՈՅՇ** Յունուար 20-Փետրուար 18  
 Առանձնաշնորհումներդ մեծ գոհունակութեամբ եւ երախտագիտութեամբ կ'ընդունիս: Հաւատարիմ եւ անկեղծ ըլլալուդ՝ սիրուած ես բոլորի կողմէ: Հեռաւոր սիրելի մը անակնկալօրէն պիտի այցելէ քեզ, սպասէ անոր ժամանումին:  
 Բախտաւոր թիւերդ են: 2,8,22,33,34

**ՉՈՒԿ** Փետրուար 19-Մարտ 20  
 Ընտանիքիդ անդամներուն եւ բարեկամներուդ կարծիքները շատ կը գնահատես եւ կենսական կը նկատես առօրեայ կեանքդ շարունակելու համար: Պիշերները դուրս ելլելով պտտիլ շատ կը սիրես: Ապագայիդ ծրագիրները պէտք է յաջողցնես:  
 Բախտաւոր թիւերդ են: 9,12,24,28,30

### ՎԵՐՋԻՆ ՄԻՋՆԱԲԵՐԴԻ ՓԼՈՒՉՈՒՄԸ

Շարունակուած էջ 6-էն

**Յ.Գ. Յարգելի ընթերցող, եթէ նկատեցիր, այս յօդուածին առաջին մասին մէջ, խօսք իսկ չեղաւ, թէ այս կապակցութեամբ ինչ վերաբերմունք ցուցաբերեց հայոց քաղաքական միտքը:**

**Ի՞նչ թեր եւ դէմ կարծիքներ հնչեցին մեր պետական այլերուն կողմէ:**

**Այդպիսի կարծիքներու մասին խօսք չեղաւ, ո՛չ թէ կողմնակալութեան, այլ կարծիքներու ի սպառ բացակայութեան պատճառով:**

**Հայաստանի Հանրապետութեան որեւէ գերատեսչական մարմինի կողմէ այս առնչութեամբ եւ ոչ մէկ համապատասխան մեկնաբանութիւն կամ բացատրութիւն տրուեցաւ:**

**Նոյնիսկ ո՛չ ոք փորձեց բացատրել, թէ ինչո՞ւ այս ամբողջը տեղի ունեցաւ ճիշդ Յունիս 2-ին, եւ ինչո՞ւ Գերմանիան որոշեց այս-**

**բան հետեւողական, Յեղասպանութենէն 101 տարի վերջ հաշիւ պահանջել Թուրքիայէն... եւ եթէ տեղի ունեցաւ այն, ինչ տեղի ունեցաւ՝ մեր քաղաքական ո՞ր մէկ ատեանը գերմանացիներուն պահանջը կամ առաջարկ ներկայացուց գաղտնագրութիւն իրենց արխիւները... առաւել եւս հիմա, այս պահուս, երբ գերմանացիները ընդունեցին Յեղասպանութեան փաստն ու իրենց մեծ մեղքի առայժմ փոքր բաժինը...**

**Չենք կարծեր, որ այս հարցերուն պատասխանները իրենց մէջ պետական գաղտնիութիւն կը պարունակեն: Առաւելաբար հակուած ենք մտածելու, որ եղածը մեր քաղաքական այլերուն կողմէ իրավիճակը ո՛չ ճիշդ ընկալելու եւ գնահատելու կամ մեր մէջ հինէն ի վեր բոյն դրած անտարբերութեան արդիւնք է...**

**Այս բոլորին մասին, սակայն այս յօդուածին երկրորդ եւ վերջին մասով:**

**Director of Fellowship Ministry Position**  
 "St. Gregory Armenian Church of Pasadena is looking for applicants for a full-time position as Director of Fellowship Ministry. It requires organizing committees and teams of volunteers to plan, develop and execute parish activities. For more information, please call the parish office at 626-449-1523."

**ՎԱՐՉՈՒ ՄՐԱՅ**  
 ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)  
 ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
 ՄԱՆՐԱՍՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
 ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

**Ն.Ա.Ս.Ս ԱՐՈՒԵՍՏԻ  
 ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ**  
**Կը Կազմակերպէ**  
**ԱՍՄՈՒՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՅՔՆԵՐ**  
**Տարիքային Բոլոր Խումբերու Համար**  
**Ղեկավարութեամբ՝**  
**Արուեստի Վաստակաւոր Դափնեկիր, Ասմունքող**  
**Եւ Հեռուստալրագրող**  
**ՆՈՒՆԷ ԱԲԵՏԻՍԵԱՆԻ**  
**Փորձերը տեղի կ'ունենան ՀԿԲՄ-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ 1060 N.Allen Ave. Pasadena .ca 91104**  
**Արձանագրութեան Համար Դիմել՝**  
**Տիկ. Արմինէ Լաչինեանին Հեռ. 626-372-4662**  
**Պր. Յարութ Տերվիչօղլեանին Հեռ. 323-351-8001**



### ՕՍՄԱՆԱՐԱՅԵՐՈՒ ԴԵՏ «ԴԻՊՈՒԾԱՅԻՆ» ԳՆԱԴԻՊՈՒՄՆԵՐ

Շարունակում է լինել 13-ին

Լորենը կը կրեն խօսակցական անուններ, որոնք հիմնական են տուեալ տարածքին վրայ տեղի ունեցած դէպքերու վրայ: Բնական աղէտներու ժամանակ այս անուններուն յղումներ կ'ըլլան, որոնք կը բանաձեւուին որպէս «հայկական անէծք»: Այս ամէնը նկատի առնելով, հետեւեալ հարցը կը ծագի՝ ի՞նչ դեր կը խաղան այս «դիպուածները» պատմագիտական «ճշմարտութիւնը» հասկնալու իմաստով: Խօսելով Հայկական Յեղասպանութեան եւ արդիականութեան միջեւ կապին մասին, Չայլը անդրադարձաւ Մարկ Նշանեանի գործին: Նշանեան դէմ է 19-րդ դարու վերջաւորութեան եւ 20-րդ դարու սկիզբի դէպքերուն ցեղասպանական «իրողութիւն» պիտակումին: Ան կը խորհի որ այս դէպքերուն «իրողութիւն» վերագրուածը, իրականութեան մէջ Յեղասպանութեան իրողութիւնը ինքնին կը նօսրացնէ՝ ցեղասպանութեան մը ապացոյցին քանդումն իսկ է: Այս պիտակումը կը նսեմացնէ ցեղասպանութեան ենթարկուած եւ տակաւին անոր հետեւանքներով ապրող մարդոց իրական փորձառութիւնները: Նշանեան կը գտնէ որ արխիւներու ժամանակակից հաստատութեան ապաւինիլը, որպէս պատմական «փաստերու» աղբիւր, ինքնաշարժներու եւ ինքնավարացումի իմացակարգերու (episteme եզրին ֆուլքայական իմաստով) անվերջ շրջան մը կը ստեղծէ: Ըստ Նշանեանի, նոր եւ տարբեր «իրականութիւններու» ստեղծումը այս ծուղակէն ելլելու միջոց մըն է, օրինակ ստեղծելով «իրականութիւն մը որ հիմնուած է օրէնքի վրայ, իրականութիւն մը որ հիմնուած է չիշողութեան վրայ, իրականութիւն մը որ հիմնուած է արուեստի վրայ, եւ այլ ուրիշ բաներ որ Աստուած միայն գիտէ...»:

Շարունակելով իր խօսքը Տոքթ. Չայլը մատնանշեց որ այս նիւթերը բարձրացնողները իրենք ալ վերջերս պատահած բռնութիւններէ վերապրողներ են: Մէկ դար առաջ հայերու ապրած բռնութիւններուն եւ հետագային Տիգրանակերտի մէջ տեղի ունեցած բռնութիւններուն միջեւ յստակ նմանութիւններ կան: Այս տեսակ շրջաձիւղի մէջ է որ վայրագութեան ժառանգութիւնը կը դառնայ ժամանակակիցի եւ տարածքայնօրէն համատարած եւ կը վերափոխուի «դիպուածներու»: Շրջապատն ալ մեծ դեր կը խաղայ որպէս անցեալի վայրագութիւններու վկայ, այսպիսով կրնանք համարել որ շրջապատը փաստաթուղթերու եւ յուշարձաններու վկայութեան կողքին երրորդ վկայութիւն մը կու տայ:

Որպէսզի կարելի ըլլայ

ուսումնասիրել թէ ի՞նչ տեսակ ճշմարտութիւններ կրնայ տալ մեզի շրջապատը որպէս վկայութիւն, Չայլը յղում ըրաւ քաղաքական բնապահպանութեան մասին Պրուսո Լաթուրի քննադատութեան (Political ecology, այն գիտական ճիւղն է որ կ'ուսումնասիրէ քաղաքական, տնտեսական եւ ընկերային գործօններու յարաբերութիւնը բնապահպանական խնդիրներու եւ անոր փոփոխութիւններուն հետ): Լաթուրի կ'ակնարկէ թէ այսօրուան մեր ընկերութիւնը մնայուն կերպով տարանջատուած է բնութեանէն, այնքան մը որ ընկերութիւնը եւ բնութիւնը տրամագծօրէն հակառակ կողմերու վրայ կը գտնուին, բնութիւնը նկատելով որպէս կրակոտրական գոյութիւն մը: Լաթուրի կարծիքով այս մէկը պատմութեան նկատմամբ արդիականութեան ունեցած խնդիրին մէջ յայտնի կը դառնայ (այսինքն՝ բնութիւնը որպէս նշանակալի դերակատար ո'չ ընկալուած եւ ո'չ ալ գնահատուած է): Ըստ Լաթուրի ասիկա ակնյայտ է երբ կը խօսինք «փաստ»ի ժամանակակից ընկալումին մասին: Ան կը մատնանշէ թէ գիտութիւնը եւ իր իմացաբանութիւնը (epistemology) կ'ազդեն պատմութեան եւ անոր «իրողութիւններուն» մասին արդիական ընկալումին վրայ: Ան կ'առաջարկէ պատմութիւնը վերայդացականացնել (re-conceptualize) որպէս երկրապատմ (geostory), ուր առարկան եւ ենթական պատմութեան վերլուծումի ընթացքին հաւասար չափով կ'ընդգրկուած են: Վերայդացականացումը առիթ կու տայ որ մարդիկ վերակապակցելով միջավայրին, հաւասար ուժերով դերակատարներ ըլլան, խախտելով առարկայի եւ ենթակայի խիստ արդիական երկուութիւնը:

Ժողովրդական ասացուածքները, գործ տեղացիները տակաւին կը գործածեն նկարագրելու իրենց շրջապատի բնութիւնն ու բնական աղէտները, կը մատնանշեն պատմութեան արտադրութեան մէջ մարդկային եւ ոչ-մարդկային դերակատարներու խաղացած դերը: Այսպիսի առերեսումներու արդի մեկնաբանութիւնը կը համարէ թէ մարդկային դերակատարը միակ ազդակն է պատմական արտադրութեան այս ընթացքին մէջ, իսկ մենք կը համարենք որ աշխոյժ փոխանակում մը կայ երկու՝ մարդկային եւ ոչ-մարդկային գործօններուն միջեւ: Այնուամենայնիւ, պէտք է նշել թէ երբ խօսքը կը վերաբերի անցեալի վայրագ դէպքերուն արդար ճանաչումին, երկրապատմային (geohistorical) իրականութիւնը այդքան ալ ազդու պիտի չըլլայ, որովհետեւ առարկային եւ ենթակային դիտումնաւոր բարդացումը արդարութեան իրագործումը պիտի վերածէ անկարելի աշխատանքի մը:

### ՍԱՐՕ ԳԻՄՆԵՑԻ - 65

Շարունակում է լինել

քանզի մենք էլ ենք հպարտ քոչնշող սրտով, գաւակներով չիշելու մայրական քո մեծ սրտով, իրօք էլ, միայն մօրն ու մօր կաթ կերած տղերքին է տրակական այն, ինչ-որ հասցնում էք անել ու տոկալ դուք՝ ձեր անհամար հոգսերի մէջ:

Սարոն իր «ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ»-ը դարձրեց արծիւների բոցն ու առիւծասիրտ հայորդիների պատկերներն ու գործերը ծրարած հասցեագրեց աշխարհասփիւռ հայութեանը: Սարոն, ինչպէս մէկ դար առաջ Փարիզում հանգրուանած Արշակ Չօպանեանն իր «Անահիտներով», նախ գիտակցօրէն մնաց հայութեան պատնէշի վրայ, յետոյ, երբ ժամանակ գտաւ, չիշեց իր գրածները, գրեց իր կարօտներից, կիսեց իր խոհերը:

Արշակ Չօպանեանի բարոյական նկարագիրը առասպել դարձած դարից աւել արդէն ուժ ու

եռանդ է հաղորդում հայութեան տարագիր գաւակներին: Նա հայրենիքից դուրս ապրեց Նանսենեան անձնագրով, միշտ էլ պատրաստ տուն դառնալու, Փարիզում սպասելով տուն դարձի հրաւերին, իր տաղանդաշատ գրչով աշխարհին պատած ցուրտ քաղաքականութիւնը, հայութեան հանդէպ եղած անտարբերութեան դաշտը հերկեց Անահիտ Աստծոյ անունով ու շունչ կրող հանդէսով:

Այսօր նոյնը կատարում է այս հեռուոր հայաշատ Կլէնտէյլում: Սարօ Գիւմրեցին,

Արշակ Չօպանեանի՝ յանուն հայութեան վառած մշակոյթի ջահն է անմար ու նորոգ պարգում աշխարհասփիւռ հայորդիներին, հաւատում, որ «ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ» գրական-մշակութային հանդէսի ընթացողների թիւը եօթնասպասուելու է:

Հաւատն ապրեցնում է: Սարօն չի 65-ամեայ Հաւատն անպարտ է...

### «3 ՇԱԲԱԹ ԵՐԵՎԱՆՈՒՄ» ՖԻԼՄ

Շարունակում է լինել

են թէ՛ սփիւռքի եւ թէ՛ հայրենիքի մէջ: Թոխաթյանն որ դերեր վերցուցած է բազմաթիւ թատերախաղերու եւ ֆիլմերու մէջ, եւ մեծ յարգանք կը վայելէ իբրեւ դերասան ու մշակոյթի գործիչ, մեծ ժողովրդականութիւն կը վայելէ նաեւ Ռուսաստանի մէջ, իր The last Mohican պատկերասրահի շարքին պատճառով:

Գալով Փիրհամգէի, ան մարմնաւորած է տասնեակ մը կերպարներ թատրոնի եւ պատկերասփիւռի համար: Իբրեւ բեմադրիչ ան ոչ միայն ծանօթ անուն է Լոս Անճելոսի թատերական աշխարհին մէջ, այլ նաեւ սինեմայի շրջանակէն ներս, իր My Uncle

Rafael եւ Guardian Angel ֆիլմերով: Իսկ Պէրպէրեան, որ մնայուն կերպով կը շրջագայի սփիւռքի բոլոր գաղութներու մէջ մենախօսութիւններ ներկայացնելով, ծանօթ է նաեւ իր գրական, բեմադրական եւ նկարչական գործերով:

Երբ ընկերները կը վճարահանեն որ «3 Շաբաթ Երեւանում»ը բացառիկ բժախնդրութեամբ նկարուած ազնիւ, գեղեցիկ գործ մըն է, եւ կասկած չունին որ հանդիսատեսը իսկապէս պիտի գնահատէ զայն, մանաւանդ այս օրերուն, երբ կենսական է իբրեւ մէկ ազգ սփիւռք-հայրենիք միացեալ ճակատ ստեղծելը, հպարտ ժպիտով, առանց մտնելու ողբի ու կոծի հոգեվիճակին մէջ:

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան Եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռ.աձայնել՝ ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**  
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

## ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած  
եւ յարմար վարձքերով  
հեռաձայնել՝ (626) 398-0506

## SEROP'S CAFE

GREEK & LEBANESE FOOD

SERVING BATON ROUGE SINCE 1979



### ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՊԱՐՈՎԵԼ Է 4 ՄԵՏԱԼ

Անապայտում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում Յունիսի 11-ին ունեցող զուգընթաց Հայաստանի 3 ներկայացուցիչները երկուսը յաղթանակ են տարել:



49 կգ քաշային Արմեն Աբգարեանը յաղթել է Ռուսաստանի ներկայացուցիչ Վոլոդիա Մնացականեանին, իսկ 56 կգ քաշային Ժորժիկ Մարուսեանը ուժեղ է գտնուել Շուբերիայի ներկայացուցիչ: 64 կգ քաշային Տոնի Գալստեանը պարտուել է մոլդովացի բռնցքամարտիկին Աբգարեանն ու Մարուսեանը, դուրս գալով կիսանեղբարիակիչ, ապահովել են առնուազն պրոնոզե մետալ: Յունիսի 10-ին կիսանեղբարիակիչ էին դուրս եկել 69 կգ քաշային Գուրգեն Մադոյեանն ու գերմանիացի քաշային Գուրգեն Յովհաննիսեանը:

### ՀԱՅԱՍՏԱՆԻ 27-ՐԴ ՕԼԻՄՊԻԱԿԱՆԸ

Հայ օլիմպիականների թիվն աւելացաւ եւս մէկով: Զիւլդրիտ Յովհաննէս Դաւթեանը եւս ստացաւ 2016թ. Ռիոյի 31-րդ ամառային Օլիմպիական խաղերի մասնակցութեան իրաւունք:



Այս մասին NEWS.am Sport-ի թղթակցի հետ զրոյցում յայտնեց Հայաստանի Չիլդրիտ Ֆեդերացիայի փոխնախագահ Դաւիթ Նիթարեանը:

«Հաստատուեց Յովհաննէս Դաւթեանի օլիմպիական ուղեգիրը: Մենք վստահ էինք, որ ուղեգիրը մերն է, քանի որ վարկանիշային աղիւսակում Յովհաննէս Դաւթեանը լաւագոյն 22-ի մէջ 10-րդն էր, իսկ օլիմպիական ուղեգիր հասնում է վարկանիշային աղիւսակի լաւագոյն 22 Չիլդրիտեանին: Օրերս փակուեց աղիւսակը եւ Չիլդրիտ միջազգային ֆեդերացիան հրապարակեց Ռիոյի Օլիմպիական խաղերին մասնակցող մարզիկներին պաշտօնական ցանկը: Վերջնական «արդիւնքներից յետոյ մեր մարզիկը մնաց 10-րդ տեղում, թէեւ վերջին երկու մրցաշարերին չմասնակցեց», - ասաց Դաւիթ Նիթարեանը:

### «ԱՐՍԵՆԱԼԸ» 30 ՄԻԼԻՈՆ Է ԱՌԱՋԱՐԿԵԼ ՀԵՆՐԻԽ ՄԻՍԻԹԱՐԵԱՆԻ ՀԱՄԱՐ

Դորոժնովի «Բորուսիան» ու Լոնդոնի «Արսենալը» շարունակում են բանակցել Հենրիխ Միսիթարեանի տրանսֆերի հարցով: Gazzetta dello Sport-ի լրագրող Նիկոլո Շչիրան թուիթերեան էջում յայտնել է, որ անգլիական ակումբը 30 միլիոն եւրո է առաջարկել Հայաստանի հաւաքականի 27-ամեայ կիսապաշտպանի համար: Ըստ իտալացի լրագրողի՝ բանակցությունները շարունակուում են: Աւելի վաղ յայտնի էր դարձել, որ «Բորուսիան» դէմ չէ բաժանուել հայ կիսապաշտպանից, որը հրաժարուում է կնքել նոր պայմանագիր: Նրա գործող պայմանագիրն աւարտուում է 2017-ի ամրանը: Գերմանիայի աւարտուած առաջնութիւնում Հենրիխ Միսիթարեանը մասնակցել է 31 խաղի եւ դարձել 11 կոլի ու 18 կոյալին փոխանցման հեղինակ: Նրա ծառայութիւններով հետաքրքրուած են նաեւ Լոնտոնի «Չելսին», «Տոտենհեմը» եւ Թուրինի «Իտալիան»:

### ԵՐԵՎԱՆՈՒՄ ԶԳԱՅԻՈՒՄ Է ԵՐՕ-2016-Ի ՇՈՒՆՉԸ


Հայաստանի հաւաքականը, չնայած չի մասնակցում Ֆրանսայում մեկնարկող ֆուտպոլի Եվրոպայի առաջնութեանը, սակայն վերջինիս շունչը նոյնպէս զգացնել է տալիս Երեւանում:



Առաջին հերթին աւելացել են բուքմէյքերական կէտերը: Գովազդային վահանակներից մէկի հերոսը յայտնի դերասան Հայկ Մարուսեանն է. «Քանի որ Հայաստանի հաւաքականը չի մասնակցում Եվրոպայի առաջնութեանը, ուստի ես երկրպագելու եմ Չեխիայի ազգային թիմին: Պատճառն այն է, որ կիսն այդ երկրից է», - «Ա1+»-ի մարզական թղթակցին հեռախօսով յայտնեց Կարգին Հայկուն, որն այժմ գործերով գտնուում է Արցախում: Իսկ ահա տարեց ֆուտպոլասէր Սամուէլ Թովմասեանը Եւրո-2016-ում երկրպագելու է միմիայն Գերմանիայի հաւաքականին:

### ՄԱՐԻԱ ՇԱՐԱՊՈՎԱՅԻՆ ՄԵԼԴՈՆԻՈՒՄԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՎ ՈՐԱԿԱԶՐԿՈՒԵԼ Է

Ռուսաստանցի թենիսիստուհի Մարիա Շարապովային մելդոնիումի (միլդրոնատ) օգտագործման համար երկու տարով որակազրկած թենիսի միջազգային ֆեդերացիան (ITF) յայտարարել է, որ մարզուհին դեղամիջոցն ընդունել է գաղտնի, առանց բժիշկի նշանակման, սեփական էներգիան աւելացնելու նպատակով:



«Երեք տարի Շարապովային միլդրոնատի ընդունման մասին տեղեակ չի պահել մարզիչին, ֆիզիոթերապեւտին, դիետոլոգին եւ միւս մասնագէտներին, որոնց հետ նա կապի միջ է եղել Կանանց թենիսի ասոցիացիայի (WTA) միջոցով: Այն փաստը, որ Շարապովային դեղամիջոցն ընդունել է մրցախաղերի եւ ինտենսիվ մարզումների ժամանակ, համոզում է մեզ, որ նա դա արել է սեփական էներգիան աւելացման նպատակով: Հնարաւոր է, նա իսկապէս հաւատացել է, որ միլդրոնատը ընդհանուր դրական ազդեցութիւն է թողնում առողջութեան վրայ: Բայց հակադրապէս ներկայացուցիչներից եւ սեփական թիմից գաղտնի պահելը թոյլ է տալիս եզրակացնել, որ նա դա արել է մարզական արդիւնքները բարձրացնելու նպատակով», - ասում է ITF-ի անկախ դատարանի որոշման մէջ:

Միջազգային ֆեդերացիան պահանջել էր չորս տարուայ որակազրկում, սակայն անկախ դատարանը սահմանափակուել է երկու տարով: Շարապովային յայտարարել է, որ որոշումը խիստ է եւ բողոքարկելու է Մարզական վճռաբեկ դատարանում: Մելդոնիումը սպորտում արգելուած է 2016թ. Յունուարի 1-ից: Որակազրկման սկիզբը կը համարուի 2016թ. Յունուարի 26-ը, երբ Շարապովային դուրսից ստուգուում է անցել Աւստրալիայի բաց առաջնութիւնում:

Մարտի 7-ին տեղի ունեցած մամուլի ասուլիսում 29-ամեայ Շարապովային յայտնել էր, որ դուրսից ստուգուումը դրական է եղել եւ խոստովանել էր, որ ժամանակին չի կարդացել մելդոնիումի արգելման մասին ստացած պաշտօնական նամակը եւ տեղեակ չի եղել:

### ԱՏՐՊԵՅՅԱՆԱԿԱՆ ՄՊՈՐՏԻ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ

Ծանրամարտի Ատրպէյճանի հաւաքականի վեց մարզիկներ որակազրկուել են դուրսից օգտագործելու համար, հաղորդում է haqqin-ը՝ լուրը վերնագրելով «Ատրպէյճանական սպորտի խայտառակութիւնը»: Բոլոր ծանրորդները դուրսից թեատ են անցել 2015թ. ԱՄՆ-ում տեղի ունեցած աշխարհի առաջնութեան ժամանակ: Ութ տարով որակազրկուել են Միլվիա Անգելովան, Ֆիրիդուն Գուլիւբը, Վալենտին Խրիստովա, Ինարա Ջախրովը, էլիւսան Ալիդուլիզադէն, չորս տարով՝ Դադաշ Դադաշէյլին:

Սպասուում է, որ օլիմպիական չորս ուղեգիր նուաճած Ատրպէյճանի հաւաքականը կը զրկուի Ռիոյի Օլիմպիական խաղերին մասնակցելու իրաւունքից:

Ծանրամարտի միջազգային ֆեդերացիայի հրապարակած որակազրկուածների ցուցակում Հայաստանի ծանրորդներ չկան:

### ՄԱՐԱԴՈՆԱ. «ՄԵՍԻՆ ԶՈՒՆԻ ԱՌԱՋԱՏԱՐԻ ԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ»

Համաշխարհային ֆուտպոլի լեգենդ, արգենտինացի Դիեգո Մարադոնան կասկածուում է, որ «Ոսկէ գնդակի» հնգակի դափնեկիր Լիոնէլ Մեսին կարող է լինել որեւէ թիմի առաջատար: «Մեսին լաւ մարդ է, բայց նա անհաստականութիւն է: Լէոնին չի հերիքում բնաւորութիւն, որը նրան կը դարձնէր թիմի առաջատար», - Մարադոնայի խոսքը մէջբերում է Goal.com-ը: Լիոնէլ Մեսին Մարադոնայի գլխաւորութեամբ հանդէս է եկել Արգենտինայի հաւաքականում: 2008-2010 թուականներին Մարադոնան Արգենտինայի թիմի գլխաւոր մարզիչն էր:



Մարադոնան Արգենտինայի հաւաքականում խաղացել է 1977-1994 թուականներին եւ 91 խաղում խփել է 34 կոլ՝ դառնալով նաեւ աշխարհի ախոյեան: Մեսին ազգային թիմում արդէն անցկացրել է 108 հանդիպում, խփել է 50 կոլ, դարձել է աշխարհի փոխախոյեան:

«Քանի որ Գերմանիայի Բունդեսլիգա վերջերս հայոց ցեղասպանութեան ճանաչման մասին բանաձեւ ընդունեց, ուստի ցանկանում եմ, որ առաջնութիւնում յաղթեն հենց գերմանացի ֆուտպոլիստները, որոնք ունեն այդ ներուժը, բացի այդ ֆուտպոլային հարուստ պատմութիւն ունեն», - պարզաբանեց նա:

Ընդհանուր առմամբ հայ ֆուտպոլասէրները տարբեր ֆաւորիտներ ունեն յառաջիկայ առաջնութիւնում: Իսկ ահա Հայկական առաջին ճակատ ֆան ակումբի ներկայացուցիչներն այնքան էլ հետաքրքրուած չեն Եւրո-2016-ով:

«Մեր անդամները տարբեր ակումբների երկրպագուներ են, սակայն երբ խօսքը վերաբերում է հաւաքականներին, ապա մենք հետաքրքրուում ենք միայն մեր ազգային թիմով», - «Ա1+»-ի թղթակցին յայտնեց ԲԲԻ հիմնադիր անդամ Սերգէյ Զանչոյեանը: